

«ԱՐՄՕՅԼ» ՓԲԸ

ԵՂՎԱՐԴԻ ՔՍԱՅՈՒՂԵՐԻ ԵՎ ԲԻՏՈՒՄԻ ԳՈՐԾԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԻԾ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Արմոյլ» ՓԲԸ տնօրեն



Ա.Աբեղի

«Ակունք-Ֆիրմա» ՍՊԸ տնօրեն



Հ. Նիկողոսյան

Երևան - 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Օգտագործվող հապավումներ և տերմիններ.....	4
Գնահատման հաշվետվության կազմման իրավական հիմքերը.....	7
1. Տեղեկություններ ձեռնարկող կազմակերպության մասին.....	11
2. Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը	11
2.1. Զրոյական տարբերակ	12
3. Շրջակա միջավայրի նկարագիրը՝ ներկա վիճակը.....	13
3.1. Աշխարհագրական դիրքը, ռելիեֆը, երկրաձևաբանությունը.....	13
3.2. Երկրաբանությունը, սեյսմիկությունը.....	13
3.3. Կլիմա.....	14
3.4. Օդային ավազան.....	23
3.5. Հողային ռեսուրսներ.....	23
3.6. Ջրային ռեսուրսներ.....	24
3.6.1. Ջրատեղաբանական պայմաններ.....	24
3.6.2. Մակերևութային ջրեր.....	25
3.7. Բուսական և կենդանական աշխարհ.....	25
3.8. Հատուկ պահպանվող տարածքներ և բնության հուշարձաններ.....	26
3.9. Պատմամշակութային հուշարձաններ	26
4. Սոցիալ-տնտեսական բնութագիրը.....	27
5. Նախագծի նկարագիրը	31
5.1. Տեխնոլոգիայի համառոտ նկարագրումը.....	31
5.2. Գործարանի ենթակառուցվածքը	33
5.3. Յուղերի տեղամաս.....	33
6. Բնապահպանական միջոցառումների ծրագիր.....	35
7. Հակավթարային միջոցառումներ.....	36
8. Ազդեցությունը մթնոլորտային օդի վրա.....	37
8.1. Բաժնի մշակման համար ելակետային տվյալները.....	37
8.2. Շրջանի ֆիզիկա-աշխարհագրական և կլիմայական պայմանների համառոտ բնութագիրը.....	37
8.3. Մթնոլորտային օդի աղտոտվածության մակարդակը.....	38
8.4. Մթնոլորտ վնասակար արտանետումների աղբյուրները.....	38
8.5. Մերձգետնյա կոնցենտրացիաների հաշվարկների արդյունքները.....	41
8.6. Անբարենպաստ կլիմայական պայմանների ժամանակ արտանետումների կարգավորման միջոցառումները.....	42
8.7. Սանիտարա – պաշտպանիչ գոտի.....	42
9. Ազդեցությունը ջրային ռեսուրսների վրա.....	42
9.1. Աշխատողների տնտեսա-կենցաղային կարիքների համար խմելու ջրի պահանջը.....	43
9.2. Մաքրված հեղեղաջրերի օգտագործում.....	44

9.3. Ջրահեռացում.....	46
10. Ազդեցությունը հողային ռեսուրսների վրա.....	46
11. Առաջացող թափոններ և կառավարում.....	46
12. Աղմուկ.....	47
13. Զրոյական տարբերակի և նախագծի իրականացման համեմատումը.....	48
14. Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր տնտեսական վնասը.....	49
15. Շրջակա միջավայրի մոնիթորինգ.....	50
15.1. Մշտադիտարկումների արժեքի հաշվարկ.....	51
16. Գործարանի տարածքի փակման ծրագիրը.....	53
Գրականության ցանկ	55
Հավելված.....	56
Հավելված 1. Գործարանի իրադրային հատակագիծ	
Հավելված 2. Կադաստրային հանույթ	
Հավելված 3. Հատված կադաստրային քարտեզից	
Հավելված 4. «Վեոլիա ջուր» ՓԲԸ, Տեխնիկական պայմանի տրամադրում	
Հավելված 5. Հողամասի սեփականության վկայականները՝ հողի նշանակության փոփոխություններով	
Հավելված 6. Շինարարության թույլտվություն	
Հավելված 7. Նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք)	
Հավելված 8. Մեքենայական հաշվարկի արդյունքները	

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Հաշվետվությունում օգտագործված հապավումները և տերմինները բերվել են ՀՀ շրջակա միջավայրի վրա ազդեցության և պահպանությանն առնչվող օրենքներից և նորմատիվ իրավական փաստաթղթերից

Շրջակա միջավայր` բնական և մարդածին տարրերի (մթնոլորտային օդ, ջրեր, հողեր, ընդերք, լանդշաֆտ, կենդանական ու բուսական աշխարհ, ներառյալ` անտառ, բնության հատուկ պահպանվող տարածքներ, բնակավայրերի կանաչ տարածքներ, կառույցներ, պատմության և մշակույթի հուշարձաններ) և սոցիալական միջավայրի (մարդու առողջության և անվտանգության), գործունեների, նյութերի, երևույթների ու գործընթացների ամբողջությունը և դրանց փոխազդեցությունը միմյանց ու մարդկանց միջև

շրջակա միջավայրի վրա ազդեցություն` հիմնադրությամբ փաստաթղթի գործողության կամ նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի եւ մարդու առողջության վրա հնարավոր փոփոխությունները.

ձեռնարկող` սույն օրենքի համաձայն` փորձաքննության ենթակա հիմնադրությամբ փաստաթուղթ մշակող, ընդունող, իրականացնող և (կամ) գործունեություն իրականացնող կամ պատվիրող պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմին, իրավաբանական կամ ֆիզիկական անձ

ներմուծող` ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ (ներառյալ` օտարերկրյա), որը գրանցվել է Հայաստանի Հանրապետությունում և իրականացնում է արտադրանքի, բանեցված արտադրանքի (բացառությամբ ֆիզիկական անձանց կողմից անձնական սպառման նպատակով ներկրված արտադրանքի) ներսերումը Հայաստանի Հանրապետության տարածք` շուկայահանման նպատակով, և պատասխանատվություն է կրում սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին դրա համապատասխանության համար

շուկայահանում` գործողություն, որն ուղղված է շուկայում նոր արտադրանքի առկայության ապահովմանը, նաև պահպանմանը` տարածման, արտադրանքի վճարովի կամ անհատույց փոխանցման նպատակով

յուղ` որպես քսուքային նյութ և (կամ) հատուկ հեղուկ օգտագործվող նավթային կամ սինթետիկ (կիսասինթետիկ) ծագում ունեցող հեղուկ

հիմնական յուղեր` յուղեր, որոնք օգտագործվում են որպես հումք` ապրանքային քսուքային յուղերի ստացման համար

ազդակիր համայնք` շրջակա միջավայրի վրա հիմնադրությամբ փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա համայնքի (համայնքների) բնակչություն` ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք

շահագրգիռ հանրություն՝ փորձաքննության ենթակա հիմնադրությամբ փաստաթղթի ընդունման և (կամ) նախատեսվող գործունեության իրականացման առնչությամբ հետաքրքրություն ցուցաբերող իրավաբանական և ֆիզիկական անձինք

գործընթացի մասնակիցներ՝ պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմիններ, ֆիզիկական ու իրավաբանական անձինք, ներառյալ՝ ազդակիր համայնք, շահագրգիռ հանրություն, որոնք, սույն օրենքի համաձայն, մասնակցում են գնահատումների և (կամ) փորձաքննության գործընթացին

լանդշաֆտ՝ աշխարհագրական թաղանթի համասեռ տեղամաս, որը հարևան տարածքներից տարբերվում է երկրաբանական կառուցվածքի, ռելիեֆի, կլիմայի, հողաբուսական ծածկույթի և կենդանական աշխարհի ամբողջությամբ.

հող՝ երկրի մակերևույթում բիոտիկ, աբիոտիկ և մարդածին գործոնների երկարատև ազդեցության արդյունքում առաջացած ինքնուրույն բնագիտապատմական հանքաօրգանական բնական մարմին՝ կազմված կոշտ հանքային և օրգանական մասնիկներից, ջրից ու օդից և ունի բույսերի աճի ու զարգացման համար համապատասխան պայմաններ ստեղծող յուրահատուկ գենետիկամորֆոլոգիական հատկանիշներ ու հատկություններ

խախտված հողեր՝ առաջնային տնտեսական արժեքը կորցրած և շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության աղբյուր հանդիսացող հողեր.

հողի բերրի շերտ՝ հողային ծածկույթի վերին շերտի բուսահող, որն օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով. հողի պոտենցիալ բերրի շերտ՝ հողային պրոֆիլի ստորին մասը, որն իր հատկություններով համընկնում է պոտենցիալ բերրի ապարների (բուսականության աճի համար սահմանափակ բարենպաստ քիմիական կամ ֆիզիկական հատկություններ ունեցող լեռնային ապարներ) հատկություններին

հողածածկույթ՝ երկրի կամ դրա ցանկացած տարածքի մակերևույթը ծածկող հողերի ամբողջությունն է. հողի բերրի շերտի հանման նորմեր՝ հողի հանվող բերրի շերտի խորությունը (սմ), ծավալը (մ³), զանգվածը (տ)

կարմիր գիրք՝ հազվագյուտ և ոչնչացման վտանգի տակ գտնվող կենդանիների բույսերի և սնկերի լրացման, խմբագրման ենթակա ցուցակ

կենսաբանական բազմազանություն՝ ցամաքային, օդային և ջրային էկոհամակարգերի բաղադրիչներ համարվող կենդանի օրգանիզմների տարատեսակություն, որը ներառում է բազմազանությունը տեսակի շրջանակներում, տեսակների միջև և էկոհամակարգերի բազմազանությունը

բնապահպանական կառավարման պլան՝ ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումներ և դրանց իրականացման մշտադիտարկման ցուցիչներ, որոնք հստակ են և չափելի՝ որոշակի ժամանակի

ընթացքում. բնության հուշարձան, բնության հատուկ պահպանվող տարածքի կարգավիճակ ունեցող գիտական, պատմամշակութային և գեղագիտական հատուկ արժեք ներկայացնող երկրաբանական, ջրաերկրաբանական, ջրագրական, բնապատմական, կենսաբանական բնական օբյեկտ

պատմության և մշակութային անշարժ հուշարձաններ՝ պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրաված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիմագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային և բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

արտադրության և սպառման թափոններ (այսուհետ՝ թափոններ)՝ արտադրության կամ սպառման ընթացքում գոյացած հումքի, նյութերի, արգասիքների, այլ արտադրանքի կամ մթերքի մնացորդներ, ինչպես նաև ապրանքներ (արտադրանք), որոնք կորցրել են իրենց սկզբնական սպառողական հատկությունները.

թափոնների գործածություն՝ գործողություններ, որոնք ուղղված են թափոնների գոյացման կանխարգելմանը, դրանց հավաքմանը, փոխադրմանը, պահմանը, մշակմանը,

թափոնների օգտահանում՝ թափոնների օգտագործում՝ որպես երկրորդային նյութական կամ էներգետիկ ռեսուրս.

ջրերի պահպանում՝ ջրերի աղտոտումը և հյուծումը կանխարգելող ու վերացնող միջոցառումներ.

կեղտաջրեր՝ ջրային ռեսուրս թափվող աղտոտված ջրեր.

սահմանային թույլատրելի կոնցենտրացիա՝ վնասակար նյութի այն քանակը, որի առկայությունը վնասակար ազդեցություն չի թողնում մարդու առողջության վրա և չի առաջացնում անբարենպաստ հետևանքներ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը կազմվել է ըստ ՀՀ շրջակա միջավայրի ոլորտը կարգավորող ՀՀ օրենքների և ՀՀ կառավարության որոշումների, իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

1. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014) – Կարգավորում է նախատեսվող գործունեության իրականացման ընթացակարգը՝ դիտարկելով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, անդրսահմանային և շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները: Ներառում է նախատեսվող գործունեության 3 կատեգորիա՝ «Ա», «Բ»՝ ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Համաձայն օրենքի իրականացվում է նախատեսվող գործունեության փորձաքննություն, որից հետո տրվում է եզրակացություն:

2. «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (1994թ.) – Կարգավորում է մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունները: Նպատակն է կանխել և վերացնել մթնոլորտային օդի աղտոտումը, դրա վրա մյուս վնասակար ներգործությունները, ինչպես նաև իրականացնել միջազգային համագործակցություն մթնոլորտային օդի պահպանության բնագավառում: Համաձայն օրենքի՝ իրականացվում է մթնոլորտային օդի պահպանության համալիր միջոցառումների ծրագրի հաստատումը, սահմանվում է մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների և ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի նորմատիվները, մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների և ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի մակարդակների նորմատիվների մշակման ու հաստատման, արտանետումների պետական հաշվառման կարգեր և այլն:

3. «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եվ օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998թ.) – Պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններն են՝ պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրաված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիմագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային և բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

4. «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (1999թ.) – Ապահովում է բուսական տեսակների (ֆլորայի) և դրանց առաջացրած համակեցությունների (բուսականության) բազմազանության, աճելավայրերի և էկոհամակարգերի հավասարակշռվածության վրա մարդու բացասական ներգործության կանխարգելումը: Իրականացնում է բուսական աշխարհի, դրա գենոֆոնդի և ցենոֆոնդի բազմազանության, աճելավայրերի պահպանության քանակական և որակական, բուսական աշխարհի շարունակական

օգտագործման և վերարտադրության գիտականորեն հիմնավորված ապահովումը, բուսական աշխարհի օգտագործման հարաբերությունների կարգավորումը, բուսական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառում օգտագործողների իրավունքների պաշտպանությունը և պարտականությունների կատարումը:

5. «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (2000թ.) – Սահմանում է ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը: Նախատեսում է գենոֆոնդի և տեսակային բազմազանության պահպանության, պաշտպանության, բնականոն վերարտադրության ապահովումը, կենդանիների բնակության միջավայրի ամբողջականության խախտման կանխումը, կենդանական տեսակների և դրանց պոպուլյացիաների ու համակենցությունների ամբողջականության, կենդանիների միգրացիայի ուղիների պահպանությունը, կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման հարաբերությունների կարգավորումը, կենդանական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառներում օգտագործողների իրավունքների պաշտպանությունն ու պարտականությունների կատարումը:

6. «ՀՀ Ջրային օրենսգիրք» (2002թ.) – Նպատակն է ազգային ջրային պաշարի պահպանությունը, օգտագործելի ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով քաղաքացիների և տնտեսության պահանջների բավարարումը, շրջակա միջավայրի էկոլոգիական կայունության ապահովումը, ինչպես նաև սույն օրենսգրքի խնդիրների լուծման համար իրավական հիմքերի ապահովումը:

7. «Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2008թ.) - Սահմանվում է հողերի արդյունավետ օգտագործման և պահպանման, հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման խնդիրները, ձևերը, վերահսկողություն իրականացնող մարմինները, ստուգող և ստուգվող անձանց իրավունքներն ու պարտականությունները, ստուգումների իրականացման կարգերը: Սույն օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ հողային ֆոնդում առկա բոլոր հողամասերի օգտագործման և պահպանության վրա՝ անկախ դրանց նպատակային նշանակությունից, սեփականության և (կամ) օգտագործման իրավունքի սուբյեկտներից:

8. «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (2006թ.) - Կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:

9. «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք (2016թ.)

ՀՀ կառավարության որոշումներ, նախարարների հրամաններ

10. ՀՀ կառավարության 19.11.2014թ. N1325-Ն որոշում՝ «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին»:
11. ՀՀ կառավարության 29.01.2010թ. N72-Ն որոշում՝ «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին»:
12. ՀՀ կառավարության 29.01.2010թ. N71-Ն որոշում՝ «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին»:
13. ՀՀ կառավարության 14.08.2008թ. N967-Ն որոշում՝ «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին»:
14. ՀՀ Կառավարության 25.01.2005թ. N91-Ն որոշում՝ «Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին»:
15. ՀՀ Կառավարության 14.08.2003թ. N1110-Ն որոշում՝ «Ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգ»:
16. ՀՀ Կառավարության 27.01.2011թ. N75-Ն որոշում՝ «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին»:
17. ՀՀ Կառավարության 22.07.2021թ. N1211-Ն որոշում՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N75-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»:
18. ՀՀ Կառավարության 8.12.2022թ. N1909-Ն որոշում՝ «Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքի 2022-2027 թվականների կառավարման պլանը հաստատելու մասին»:
19. ՀՀ քաղաքաշինության նախարարի 17.03.2014թ. N80-Ն հրաման՝ ՀՀՇՆ 40-01.01-2014 «Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում» շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N82 հրամանում փոփոխություն կատարելու մասին»:
20. ՀՀ կառավարության 30.06.2011թ. N927-Ն որոշում՝ «Ըստ Հայաստանի Հանրապետության ջրավազանային տարածքների՝ խմելու-կենցաղային, գյուղատնտեսական նպատակներով ջրի պահանջարկի, ինչպես նաև բնապահպանական թողքերի գնահատումները սահմանելու մասին»:
21. ՀՀ Կառավարության 09.08.2007թ. N978-Ն որոշում՝ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Եղվարդի քաղաքային համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագիծը հաստատելու մասին»:
22. ՀՀ Կառավարության 27.05.2015թ. N764-Ն որոշում՝ «Շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատման և հատուցման կարգը հաստատելու մասին»:

23. **ՀՀ Կառավարության 04.01.2024թ. N32-Ն որոշում՝** «Մթնոլորտային օդն աղտոտող (վնասակար) նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների նախագծերի մշակման և սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների նախագիծ ներկայացրած իրավաբանական անձանց և ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող ֆիզիկական անձանց արտանետման թույլտվությունների տրամադրման կամ մերժման կամ ուժը կորցրած ճանաչելու մասին կարգը հաստատելու մասին»:
24. **ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թ. դեկտեմբերի 28-ի N102-Ն հրաման՝** «ՀՀՀՆ 20.04-«Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր» շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2006 թվականի փետրվարի 3-ի N24-ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին»:
25. **ՀՀ Շրջակա միջավայրի նախարարի 07.03.2007թ. N50-Ն հրաման՝** «ՀՀ Բնապահպանության նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 25-ի N430-Ն հրամանում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին»:
26. **ՀՀ քաղաքաշինության նախարարի 22.01.2024թ. N03-Ն հրաման՝** «ՀՀՀՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2011 թվականի սեպտեմբերի 26-ի N167-ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին»:
27. **ՀՀ Շրջակա միջավայրի նախարարի 10.12.2003թ. N464-Ն հրաման՝** «Ջրային ռեսուրսներ թափվող կեղտաջրերի թույլատրելի սահմանային արտահոսքի չափաքանակների հաշվարկի մեթոդիկական հաստատելու մասին»:
28. **ՀՀ առողջապահության նախարարի 06.03.2002թ. N138-Ն հրաման՝** «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III-11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին»:
29. **ՀՀ քաղաքաշինության նախարարի 17.03.2014թ. N79-Ն հրաման՝** ՀՀՀՆ 22-04-2014 «Պաշտպանություն աղմուկից» շինարարական նորմերը հաստատելու եվ հայաստանի հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N82 հրամանում փոփոխություն կատարելու մասին»:
30. **ՀՀ Շրջակա միջավայրի նախարարի 25.12.2006թ. N430-Ն հրաման՝** «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը հաստատելու մասին»:

1. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԶԵՌՆԱՐԿՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Արմոյլ» փակ բաժնետիրական ընկերության իրավաբանական հասցեն՝ Երևան, Տիգրան Պետրոսյան փող., 28/4 շենք (Դավթաշեն վարչ. շրջան), 0054:

Ընկերությունը հիմնադրվել է 2013 թվականին, հիմնադիրները տվյալ ոլորտում ունեն 21 տարվա մասնագիտական փորձ: Նախքան Հայաստան գալը, ընկերությունը գործունեություն է ծավալել ԱՄԷ-ի, ասիական, եվրոպական, աֆրիկյան մի շարք երկրներում:

«Արմոյլ» ընկերությունը հանդիսանում է «Լուրբերս» ապրանքանիշի պաշտոնական ներկայացուցիչը Հայաստանում և ԱՊՀ երկրներում:

«ԱՐՄՕՅԼ» փակ բաժնետիրական ընկերությունը նախատեսում է ՀՀ Կոտայքի մարզի, Եղվարդ քաղաքի արդյունաբերական գոտում կազմակերպել բիտումի օքսիդացման գործարան, որը կներառի նաև քայտուղերի պատրաստման և փաթեթավորման տեղամաս:

Այդ նպատակով ընկերությունը սեփականաշնորհել է 2.8 հա մակերեսով տարածք և փոխել հողի նշականությունը արդյունաբերականի: Նախկինում սա եղել է աղբավայրի վերածված ամալի տարածք:

Նոր գործարանի շահագործման համար առկա են բոլոր ենթակառուցվածքները և մոտեցող ավտոճանապարհը:

2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-150-Ն օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի «գ» ենթակետի ներկայացված գործունեությունը դասակարգվում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

Աշխարհում բնական բիտումի (ձուրթ) պաշարները նվազել են, իսկ պահանջները աճել բազմապատիկ անգամ, որը կախված է ճանապարհաշինարարության և շինարարության ծավալների աննախադեպ աճման հետ:

«ԱՐՄՕՅԼ» ՓԲ ընկերությունը նախատեսում է իր սեփական տարածքում կազմակերպել բարձրորակ բիտումի և տարբեր յուղերի արտադրություն:

Նախատեսվող գործունեության հասցեն՝ ՀՀ Կոտայքի մարզ, Եղվարդ համայնք, ք.Եղվարդ՝ Երևանյան խճուղի 129:

2022թ. մայիսի 6-ին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունում տեղի է ունեցել հանդիպում ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության, «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի մասնագետների և «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի ու իրանական Aras Jes Petro Co ընկերության ներկայացուցիչների միջև: Իրանական կողմը ներկայացրել է իրենց ընկերության կողմից արտադրվող բիտումի տեսակները, Հայաստանում բիտումի արտադրություն հիմնելու համար ընկերության հեռանկարները:

Նախարարության ներկայացուցիչները նշել են, որ հաշվի առնելով Հայաստանում առկա ակտիվ ճանապարհաշինական աշխատանքների ծավալները, շատ կարևոր է

երկրում ունենալ բարձր որակի բիտում: Կարևոր է նաև, որ բիտումի արտադրությունը կազմակերպվի հենց Հայաստանում:

«Արմոյլ» ընկերության կողմից բիտումի ստացման նախագծի իրականացումը թույլ կտա մրցակցություն ապահովել տվյալ ոլորտում և կնպաստի ճանապարհային շինարարության զարգացմանը:

Բացի այդ, հունվարի 22-26-ին Իրան այցելությունից հետո Էկոնոմիկայի նախարարը հայտարարեց, որ պայմանավորվածություն է ձեռք բերվել առաջիկա 6 ամիսների ընթացքում ապրանքաշրջանառությունը ներկայիս 400 միլիոն դոլարից հասցնել 1 միլիարդ դոլարի: Այսինքն՝ ավելացնել 2.5 անգամ:

Հայաստանը կարող է օգտակար լինել իրանցի գործարարներին՝ իրենց արտադրանքը ԵԱՏՄ տարածքում վաճառելու հարցում: Ըստ նախարարի, Հայաստանում կարող է կազմակերպվել իրանական ապրանքների արտադրության ցիկլի վերջին փուլը:

Այսկերպ այդ ապրանքները կդիտարկվեն իբրև հայաստանյան ծագմամբ ապրանքներ, ինչն էլ թույլ կտա դրանք իրացնել ամբողջ աշխարհում՝ շրջանցելով Իրանի դեմ կիրառված պատժամիջոցները:

Այս ծրագրում նախատեսվում է ներառել շինարարական, գյուղատնտեսական, նաև նավթաքիմիական արտադրանքները: Վերջինների շարքում, ի դեպ նաև հիշատակվեց «Արմոյլ» ընկերությունը: Ըստ նախարարի, «միայն այդ գործարանի գործարկմամբ մենք կկարողանանք գրեթե կրկնապատկել մեր շրջանառությունն Իրանի հետ»: Ելնելով վերոհիշյալից «Արմոյլ» ընկերությունը նախատեսում է Իրանից ներմուծել տարբեր տեսակի պատրաստի արդյունաբերական և տրանսպորտային յուղեր և Հայաստանում իրականացնել դրանց փաթեթավորումը և պիտակավորումը:

Օքսիդացված բիտումների օգտագործումը կազմում է՝ ԱՄՆ - 73,6%; եվրոպական երկրներում - 79,8%, Ռուսաստանում ճանապարհաշինությունում՝ 93-95%:

Նախագծի իրականացումը կնպաստի ՀՀ-ում փոքր և միջին բիզնեսի զարգացմանը, նոր 250 աշխատատեղերի բացմանը, բյուջե փոխանցումների ավելացմանը:

2.1. ԶՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿ

Տարածքը, որտեղ «Արմոյլ» փակ բաժնետիրական ընկերությունը նախատեսում է կառուցել բիտումի օքսիդացման գործարան, գտնվում է ՀՀ Կոտայքի մարզի, Եղվարդ քաղաքի արդյունաբերական գոտում, որտեղ ընտրված տարածքը ժամանակի ընթացքում վերածվել էր անկազմակերպ աղբավայրի: Նախագծի իրականացման արդյունքում տարածքը կմաքրվի աղբից, կվերանա գարշահոտը, հիվանդություն տարածող կրծողների պոպուլյացիան: Նախագծի իրականացումը թույլ կտա ստեղծել նոր 250 աշխատատեղ, 250-300 հազ. ՀՀ դրամ միջին աշխատավարձով, ընդ որում աշխատանքի ընդունվելու առաջնահերթությունը կտրվի նախնառաջ համայնքի բնակիչներին, այնուհետև նախագծի մատչելի գոտում և այլ բնակավայրերի բնակիչներին:

Տարածքի ընտրությունը, կիրառվող արդիական տեխնոլոգիան և նախատեսվող բնապահպանական միջոցառումները նվազագույնի պետք է հասցնեն շրջակա միջավայրի և մարդկանց առողջության վրա բացասական ազդեցությունը:

Կավելանան փոխանցումները տեղական և կենտրոնական բյուջե: Գործարանի կառուցումը կբերի տարածքի ինֆրակառուցվածքի զարգացմանը, կաշխուժանա արևտուրը և հարակից գործող ընկերությունների աշխատանքը:

Գործարանի շահագործման փուլում ընկերությունը նախատեսում է իրականացնել մի շարք սոցիալական ծրագրեր:

Նախագծի չիրականացումը կբերի տարածաշրջանի աշխատունակ բնակչության տարագնացությանը, բնակչության սոցիալական վիճակը կմնա նույնը, չի բարեկարգվի համայնքը, չեն ստեղծվի նոր եթակառուցվածքներ, չի զարգանա հարակից գործունեությունը: Տարածքը նախկինի պես կծառայի որպես աղբավայր, շրջակա միջավայրի վրա թողնելով օր-օրի աճող իր բացասական ազդեցությունը:

3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ՝ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ

3.1. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՌԵԼԻԵՖԸ, ԵՐԿՐԱՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Նախագծվող գործարանի տարածքի աշխարհագրական կոորդինատներն են՝ 40016՝ 40.4՝N, 44029՝ 07.7՝ E:

Այն գտնվում է Արարատյան հարթավայրի նախալեռնային մասում, Արայի լեռան հարավային ստորոտում, Եղվարդի սարավանդի վրա: Եղվարդի սարահարթը տեղակայված է Արագած և Արայի լեռ խոշոր հրաբուխների միջև, 1000-1500 մ բարձրությունների վրա: Ռելիեֆը թույլ բլրակային-ալիքավոր է, թույլ մասնատված: Որոշ տեղերում բարձրանում են առանձին շլակային կոներ:

Շրջանին բնորոշ է տեկտոնահրաբխային և հրաբխաերոզիոն ռելիեֆի տիպը, ներկայացված լավաներով ծածկված եզրային սարավանդով՝ փոքրաթեք ծալքավոր կառույցների վրա: Ռելիեֆի ձևը ձևասառձադաշտային է, արտահայտված տրոգներով (պաշտահովիտներով) [1]:

Ռելիեֆ առաջացող արտածին երևույթներից նկատվում է էյուվիալ հողառաջացում՝ այլուվիալ նստվածքների վրա: Սողանքային երևույթները բնորոշ չեն:

Եղվարդը գտնվում է ծովի մակերևույթից 1317 մ բարձրության վրա, սարավանդի համարյա կենտրոնում, չոր տափաստանային, կիսատափաստանային գոտում:

Անմիջապես Եղվարդ բնակավայրի տեղանքում ռելիեֆը հիմնականում հարթ է, թեքված դեպի հարավ:

3.2. ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՄԵՅՍՄԻԿՈՒԹՅՈՒՆԸ

Ինժեներաշինարարական պայմանները բարենպաստ են: Հիմնականում տարածված են ժայռային և կիսաժայռային ապարները՝ ծածկված մակերեսային նստվածքների (խճեր, գլաքար, կավավազ և այլն) փոքր շերտով:

Եղվարդի շրջանի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են վերին պլիոցեն-էոպլեյստոցենի հասակի ապարները, որոնց վրա տեղադրված են 1500մ հզորությամբ հրաբխային լավային հոսքերը՝ ներկայացված չստորաբաժանված բազալտային անդեզիտներով, անդեզիտներով, դացիտներով:

Լավային հոսքերը վերածածկված են չորրորդական-ուշ պլիոցենի ժամանակաշրջանի այլովիալ-դեյուվիալ նստվածքներով:

Համաձայն ՀՀՇՆ 20.04 2020թ., Եղվարդ քաղաքը գտնվում է 2 գոտում (8-9 բալ), որին համապատասխանող գրունտի հորիզոնական արագացման առավելագույն մեծությունը՝ $A_{max} = 0.4g$:

3.3. ԿԼԻՄԱ

Եղվարդի գտնվելու շրջանում կլիման արտահայտված ցամաքային է:

Ձմեռը չափավոր ցուրտ է, առանձին տարիներին՝ «թույլ սառնամանիքային»: Իշխում է ձմեռային եղանակների անտիցիկլոնային տիպը՝ անհողմ շտիլային քամու ռեժիմ: 15 օր ամեն ամսվա ընթացքում դիտվում են տաքացումներով եղանակներ, երբ օրվա ընթացքում օդի ջերմաստիճանը բարձրանում է 0°-ից, դիտվում է ձյան շերտի քայքայում: Ձմեռային եղանակային ռեժիմը ունի շատ կայուն բնույթ: Ձմեռը համեմատաբար կարճ է՝ 93 օր, սկսվում է դեկտեմբերի առաջին տասնօրյակից և տևում մինչև մարտի առաջին տասնօրյակը: Դեկտեմբերի երկրորդ տասնօրյակից ձևավորվում է կայուն ձյան շերտ, հասնելով մինչև 60-68 սմ բարձրության:

Ձմռան ժամանակահատվածի առանձնահատկությունները՝ կայուն և բարձր ձյան շերտի ձևավորումը և արևոտ, «չափավոր ցուրտ» եղանակները:

Եղվարդը գտնվում է Արայի լեռան անմիջական ստորոտում, այստեղ են բացվում լեռան հարավային լանջերը, և լեռան գագաթի օդային զանգվածները, լինելով ավելի սառը և ավելի ծանր, մեծ թեքություն ունեցող լանջերով սահում են դեպի սարահարթ: Այս նույն պրոցեսն է տեղի ունենում նաև Արագածի գագաթին ձևավորված ավելի սառը և ծանր

օդային զանգվածների հետ, որոնք իջնելով Ապարանի սարահարթ, հասնում են մինչև Եղվարդ: Ջեռուցման սեզոնն այստեղ տևում է 150-160 օր:

Գարունը համեմատաբար կարճ է, բաժանվում է երկու կեսի: Առաջին կեսը սառն է, խոնավ, անկայուն եղանակային ռեժիմով: Երկրորդը տաք է, Միջերկրական ծովից ցիկլոնների շարքի հաճախակի անցումներով: Գարնանային տեղումների և օդի բարձր ջերմաստիճանի զուգակցումը նպաստում են ձյան ինտենսիվ հալոցքին, և Արայի լեռան լանջերի ձորակներ-հեղեղատները վարարում են, առաջացնելով հեղեղներ:

Ամառը ունի առավելագույն տևողություն՝ մայիսի առաջին տասնօրյակից մինչև հոկտեմբերի կեսը՝ 24 շաբաթ (168 օր): Եղանակային բոլոր առանձնահատկություններն ամառվա սեզոնում պայմանավորված են հիմնականում ծածկող մակերեսի և մթնոլորտի շրջանառության փոխազդեցությամբ բարձր թերմիկ ֆոնի վրա: Սա բերում է «շատ շոգ, շատ չոր» և «շոգ չոր» եղանակների ձևավորմանը, որոնք միասին դիտվում են 25 օր ամսվա ընթացքում: Եղանակային ռեժիմը շատ կայուն է: Ամառային եղանակային ռեժիմը տարբերվում է Եղվարդին հատուկ առանձնահատկություններով՝ իսպառ բացակայում են «անձրևոտ» և «թխպոտ» (ամպամած ամբողջ օրվա ընթացքում) եղանակները: Ամռանը միջզոնայական օդային զանգվածների ջերմաստիճանային կոնտրաստի նվազումը և տեղական զանգվածների կոնդենսացման մակարդակի բարձրացումը Եղվարդում պայմանավորում են մթնոլորտային ֆրոնտների հազվադեպ անցումը:

Նախագծման շրջանի կլիմայական բնութագրերը բերված են 3.1-3.6 աղյուսակներում՝ ըստ Եղվարդի դիտակայանի (1336մ ծ.մ.) տվյալների (ՀՀՇՆ 22-01-2024թ. համաձայն):

Օդի միջին տարեկան ջերմաստիճանը 9.7°C է, ամենատաք ամսվանը՝ 22.8°C (հուլիս-օգոստոս), ամենացուրտ ամսվանը (հունվար)՝ -4.9° (աղյուսակ 3.1): Օդի հարաբերական խոնավությունը խիստ տարբերվում է ըստ տարվա ժամանակահատվածների՝ ձմռանը այն հասնում է 71-76%, իսկ հունիս-սեպտեմբեր ամենատաք ամիսներին՝ չի գերազանցում 49-53% (աղյուսակ 3.3):

Տեղումների տարեկան քանակը 445 մմ է, ընդ որում տեղումների առավելագույն քանակը դիտվում է ապրիլ-հոկտեմբեր ամիսներին՝ 259 մմ (աղյուսակ 3.4):

Քամու միջին տարեկան արագությունը 2,6 մ/վրկ է: Տարվա կտրվածքով գերիշխում են հյուսիս-արևելյան և հարավային ուղղության քամիները (աղյուսակ 3.6):

Օդի միջին ամսական և տարեկան ջերմաստիճանները, °C

Աղյուսակ 3.1

Բնակավայրի անվանումը	Միջին ամսական ջերմաստիճանը												Տարեկան	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII			
Եղվարդ	-4.9	-2.8	2.7	9.4	14.4	18.9	22.8	22.8	18.6	11.8	4.8	-1.7	9.7	-32.6	38.7

Օդի միջին առավելագույն (մ.ա.) և միջին նվազագույն (մ.ն.) ջերմաստիճանը

Աղյուսակ 3.2

Բնակավայրի անվանումը	մ.ա./ մ.ն.	ըստ ամիսների, °C												Տարեկան
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
Եղվարդ	մ.ա.	0.1	2.3	7.9	15.3	20.6	26.0	30.0	30.3	25.5	18.0	10.1	3.0	15.8
	մ.ն.	-8.6	-7.1	-1.4	4.6	9.2	13.3	17.3	17.3	13.1	7.1	0.7	-4.6	5.1

Օդի հարաբերական խոնավությունը (%)

Աղյուսակ 3.3

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %																
	ըստ ամիսների												Միջին տարեկան	Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին	Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
Եղվարդ	75	71	65	61	60	53	49	47	49	59	70	76	61	75	66	49	34

Մթնոլորտային տեղումները, մմ

Աղյուսակ 3.4

Բնակավայրի անվանումը	միջին ամսական Տեղումների քանակը _____ մմ օրական առավելագույն												Տարեկան	Տեղումների քանակը նոյեմբեր- մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը ապրիլ- հոկտեմբեր ամիսներին, մմ
	ըստ ամիսների														
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Եղվարդ	35	36	44	60	64	39	26	13	17	40	35	36	445	186	259
	30	31	42	40	42	29	53	45	35	39	37	28	53		

Ձևաձածկույթ

Աղյուսակ 3.5

Բնակավայրի անվանումը	Ձյան ծածկույթը			
	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ	Գրունտի սառչման առավելագույն խորությունը, սմ
1	2	3	4	5
Եղվարդ	68	74	156	79

Քամի

Աղյուսակ 3.6

Բնակավայրի անվանումը	Ամիսներ	Կրկնելիությունը, %								Անդրորի կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Գերակշռող ուղղությունը հունիս - օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսին, մ/վ	Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր - փետրվար ամիսներին	Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ
		Միջին արագությունը, մ/վ													
		Հյուսիսային	Հյուսիս-արևելյան	Արևելյան	Հարավ- արևելյան	Հարավային	Հարավ-արևմտյան	Արևմտյան	Հյուսիս- արևմտյան						
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Եղվարդ	հունվ ար	6	48	11	3	15	6	9	2	40	1.1	ՀսԱրլ	5.7	ՀսԱրլ	1.8
		1.7	1.8	1.7	1.5	1.7	1.9	1.8	1.7						
	ապրիլ	5	48	7	3	17	10	8	2	23	2.6				
		3.0	3.8	2.7	2.4	2.4	2.8	2.7	2.1						
	հուլիս	6	73	4	1	7	4	4	1	11	4.8				
		4.9	5.5	4.9	1.7	3.0	2.5	3.0	1.8						
	հոկտե մբեր	5	55	6	3	16	8	6	1	31	1.9				
		2.7	3.1	2.1	1.9	1.9	2.3	1.8	2.2						

Եղվարդ քաղաքի գտնվելու շրջանի հաշվարկային կլիմայական հարաչափերը բերված են 3.7 և 3.8 աղյուսակներում:

Տարվա տաք ժամանակահատվածի կլիմայական հարաչափեր (մաս 1)

Աղյուսակ 3.7

Բնակավայրի անվանումը	Օդի ջերմաստիճանը, °C														
	ամենատաք օրվա միջին օրական ջերմաստիճանը						ամենա շոգ ամսվա միջինը	տարբեր ապահովվածությամբ (%) առավելագույն ջերմաստիճանը						դիտարկված բացարձակ առավելագույնը	
	ապահովվածություն							ապահովվածություն, %							
	0.99			0.95				1	2	5	10	20	50		
1	2			3			4	5	6	7	8	9	10	11	
Եղվարդ	18	19	20	21	22	23	12.7	22.9		28	29	30	30	31	32
Եղվարդ	30	30	23.5	40	39	38	38	37		36	39				

Տարվա ցուրտ ժամանակահատվածի կլիմայական հարաչափեր (մաս 1)

Աղյուսակ 3.8

Բնակավայրի անվանումը	Օդի ջերմաստիճանը, °C														
	ամենացուրտ օրվա			ամենացուրտ հնգօրյակի			ամենա ցուրտ ժամա նակա շրջանի միջինը	ամենա ցուրտ ամիս ների միջինը	տարբեր ապահովվածությամբ (%) նվազագույն ջերմաստիճանը						Դիտար կված նվազա գույնը
	ապահովվածություն			ապահովվածություն					ապահովվածություն, %						
	0.98	0.95	0.92	0.98	0.95	0.92			1	2	5	10	20	50	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Եղվարդ	-21	-19	-19	-18	-17	-16	-3.1	-5.8	-30	-29	-27	-25	-22	-20	-33
Եղվարդ	15	17	18	18	19	20	8.8	-13	-16	-18	-20	-23	-24		

3.4. ՕԴԱՅԻՆ ԱՎԱԶԱՆ

Ֆոնային կոնցենտրացիան ներկայացվում է ՀՀ ՇՄՆ «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող տվյալների համաձայն.

Ժամանակավոր առաջարկություններ «Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումները»

Աղյուսակ 3.9

Բնակչության քանակը (հազար մարդ)	Ֆոնային կոնցենտրացիաներ (մգ/մ ³)			
	Փոշի	Շմմբի երկօքսիդ (SO ₂)	Ազոտի երկօքսիդ (NO ₂)	Ածխածնի օքսիդ (CO)
	50 -100	0.098	0.007	0.034
10-50	0.095	0.006	0.033	1.1
<10	0.071	0.006	0.023	0.8

3.5. ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ


✓ Ընդհանուր նկարագիրը

Եղվարդի սարավանդը ծածկված է լեռնային գորշ և շագանակագույն հողերով:

Եղվարդ քաղաքի շրջակայքում տարածված են բաց շագանակագույն խճաքարային ցեմենտացված հողերը՝ տեղ-տեղ կարբոնատային ենթատիպի (նկ.3.1): Հողերը առաջացել են էյուվիալ և էյուվիալ-դեյուվիալ նստվածքների վրա, որոնց լիթոլոգիական կազմը ներկայացված է "սպիտակահողով"՝ կարբոնատա-կրաքարային կուտակումներով, ոչ միատարր ավազակավերով և կավավազներով: Հումուսի պարունակությունը հողերում տատանվում է 3-5% սահմաններում, քարքարոտությունը՝ շուրջ 30%:

Հողերը հիմնականում միջին և ուժեղ էրոզացված են (էրոզացվածությունը՝ 46-70%-ի սահմաններում):

Ըստ գլխավոր հատակագծի, Եղվարդ համայնքի ընդհանուր տարածքը կազմում է 6722.2 հա, որից 4616.96 հա գյուղատնտեսական հողեր են: Հողերի գյուղատնտեսական օգտագործումը հնարավոր է միայն արհեստական ոռոգման պայմաններում:



բաց շագանակագույն խճաքարային, ցեմենտացված, տեղ-տեղ կարբոնատային
շագանակագույն խճաքարային, ցեմենտացված, տեղ-տեղ կարբոնատային

Նկար 3.1. Եղվարդի համայնքում տարածված հողատիպը

✓ Նախագծման տարածք

Գործարանի տակ հատկացված տարածքը նախկինում եղել է աղբավայր: Հողի բերրի շերտը տարածքում բացակայում է:

3.6. ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

3.6.1. Ջրաերկրաբանական պայմաններ

Եղվարդի սարավանդը առանձնացված է Քասախ և Հրազդան գետերի կիրճերով: Սարահարթի հին ռելիեֆը ծածկված է անդեզիտաբազալտային լավաների հզոր ծածկոցներով և հոսքերով:

Շրջանի ստորերկրյա ջրերը պատկանում են միջլավային և լավատակ ջրահոսքերի տիպին և տեղադրված են լավաների ու նրանց բեկորային տարբերակների


ծածկոցներին և հոսքերին: Լավային ջրահոսքերը ջրաքաշում են դեպի Արարատյան արտեզյան ավազանը: Ճղքավոր անդեզիտաբազալտային լավաները հիմնական աղբյուր են հանդիսանում ստորերկրյա ջրերի կուտակման և տեղափոխման համար:

Եղվարդ քաղաքի շրջակայքում, ինչպես և ամբողջ Եղվարդի սարահարթում, ստորերկրյա ջրերի ելքերը մակերևույթ բացակայում են:

Նախագծման տարածքում ստորգետնյա ջրերը բացակայում են:

3.6.2. Մակերևութային ջրեր

Եղվարդի սարահարթում հալոցքային և անձրևային ջրերը հրաբխային ապարների ճեղքվածքներով ներծծվում են լավաների ջրատար համալիր, և այդ է պատճառը, որ մակերեսային հոսք չի ձևավորվում: Եղվարդ քաղաքի գտնվելու շրջանում գետակները բացակայում են: Եղվարդը գտնվում է Հրազդան ու Քասախ գետերի ավազանների միջև (նկար 3.2)՝ նրանց միջին հոսանքում: Ամենակարճ հեռավորությունը մինչև Հրազդան գետը կազմում է 7.8 կմ, մինչև Քասախ գետը՝ 9 կմ:



Նկար 3.2. Եղվարդի դիրքը՝ Հրազդան և Քասախ գետերի ավազանների միջև:

Նախագծի իրականացման դեպքում ջրային ռեսուրսների վրա ազդեցություն տեղի չի ունենա:

3.7. ԲՈՒՍԱԿԱՆ ԵՎ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

Նախագծվող գործարանի տարածքը գտնվում է արդյունաբերական գոտում և նախկինում եղել է խախտված: Հողաբուսական շերտը այստեղ բացակայում է:

Արդյունաբերության գոտում մարդու երկարատև ինտեսիվ գործունեության արդյունքում կենդանիները այս տարածքից վաղուց հեռացել են:

Նախագծի իրականացման դեպքում որևէ ազդեցություն կենսաբազմազանության վրա տեղի չի ունենա:

3.8. ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐ ԵՎ ԲՆՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

Պետության կողմից բնության հատուկ պահպանվող տարածքները ինչպես նախագծվող գործարանի ազդեցության գոտում, այնպես էլ ամբողջ Եղվարդի համայնքում բացակայում են:

Բնության հուշարձաններից Եղվարդի համայնքում հայտնի է 3 երկրաբանական հուշարձան.

1. «Անանուն» խզվածքներ, Եղվարդ ավանից հվ, ավազահանքի մոտ
2. Թագավորանիստ խարամային կոնի պեմզաների և խարամների կոնտակտ, Եղվարդ քաղաքից 3.5 կմ դեպի հարավ
3. «Թագավորանիստ» խարամային կոն, Եղվարդ ավանից 3 կմ հվ, Աշտարակ տանող խճուղու ձախ կողմում

Բնության հուշարձանները գտնվում են նախագծվող գործարանի ազդեցության գոտուց դուրս, հեռու:

3.9. ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒՅԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

Պետական ցուցակում գրանցված հուշարձանները, որոնք պահպանվում են Եղվարդ քաղաքում, բերված են աղյուսակ 3.11-ում:

Եղվարդ համայնքի հուշարձանները՝ գրանցված Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում

Աղյուսակ 3.11

համարը	հուշարձանախումբը, հուշարձանը	Ժամանակը	Գտնվելու տեղը	նշանակություն	Ծանոթագրություն
1.	Բնակատեղի	3-15 դդ.	քաղաքից 3 կմ հս-աե	Հ	
2.	Բնակատեղի Մեղանասար	20-18 դդ.	քաղաքից հվ-աե	Հ	համանուն բլրի զազաթին
2.1	Դամբարանադաշտ	Ք.ա 2 հազ. 1 կես	Մեղանասար բլրի ստորոտում	Հ	
3.	Բնակելի տուն	19-20 դդ.	եռանավ եկեղեցուց հս	Հ	
4.	Եկեղեցի	4 դ.	գործող գերեզմա-	Հ	պահպանվել են

համարը	հուշարձանախումբը, հուշարձանը	Ժամանակը	Գտնվելու տեղը	նշանա- կություն	Ծանոթագրություն
			նոցի հվ մասում		հիմքերը և
4.1	Գերեզմանոց	5-17 դդ.	գործող գերեզմանոցի կենտր., աե և հվ մասերում	Հ	պահպանվում է 28 խաչքար, 1 կոթող, 1 թափանաքար
5.	Եկեղեցի	5-6 դդ.	Տերյան փող. N 4 տան բակում	Հ	միանավ սրահ
6.	Եկեղեցի	5դ., վերակառ. 6-7 դդ.	Տերյան փող. N 1 տան մոտ	Հ	
6.1	խաչքար	16-17դ.	Եկեղեցու մեջ	Հ	կոտրված
6.2	տապանաքար		Եկեղեցուց 5մ հվ-աե	Հ	
7.	Եկեղեցի Սբ.Աստվածածախն	1301 թ.	քաղաքի կենտր.մասում	Հ	պահպանվում է 8 խաչքար
8.	Հուշարձան երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1975թ.		Տ	
9.	Կոթող	5-6 դդ.		Հ	
10.	Մատուռ Սբ.Սարգիս	վերակառ. 20 դ.	զոլվածների հուշարձ.դիմաց	Հ	պահպանվել են հին եկեղեցու հիմքեր
10.1	խաչքար	16-17 դդ.	մուտքի աջ կողմում	Տ	հատված

Բոլոր նշված հուշարձանները գտնվում են գործարանի ազդեցության գոտուց դուրս:

4. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Եղվարդի համայնքը ձևավորվել է 05.11.2017թ.՝ համաձայն "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 102-րդ հոդվածի, և ներառում էր 6 բնակավայր՝ Եղվարդ քաղաքը, Արագյուղ, Բուժական, Զովունի, Զորավան և Սարալանջ գյուղերը: 2021թ. դեկտեմբերին այն վերանվանվել է Նաիրի համայնք և լրացուցիչ ընդգրկվել է նաև 2 բնակավայր՝ Պռոշյան և Քասախ բնակավայրերը:

Համայնքի բնակավայրերում մշտական բնակչության թիվը, մարդ՝ 01.01.2022թ. դրությամբ [4]. Եղվարդ քաղաքը – 12106, Արագյուղ - 1114, Բուժական - 1615, Զովունի - 6503, Զորավան – 1673, Սարալանջ – 321, Պռոշյան – 5588, Քասախ – 6158:

Եղվարդ քաղաք

Եղվարդն ունի 3780 տնտեսություն: Քաղաքում իրենց մասնաճյուղն ունեն «Էկոնոմ», «Արդշինինվեստ», «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ» բանկերը:

Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ հատկապես առանձնանում է սննդամթերքի և խմիչքների արտադրությունը

(կոնյակի, կաթնամթերքի), կաշվե արտադրատեսակների և կոշկեղենի արտադրությունը: 42 ձեռնարկություններից 21-ը խոշոր տնտեսվարող սուբյեկտներ են՝ հացի և հացամթերքների, գինու, կոշկեղենի, մետաղյա առարկաների արտադրության, Եղվարդի մարզակոշիկների ֆաբրիկան [5]: Քաղաքի տնտեսական կյանքում էական դեր ունի նաև գյուղատնտեսությունը, որի մեջ հիմնական ուղղությունը հացահատիկի մշակությունն է: Մեփականաշնորհված 2657.0 հա հողատարածքում մշակվում են հացահատիկային և կերային կուլտուրաներ, խաղողի և պտղատու կուլտուրաներ:

Եղվարդում գործում են՝ 2 հիմնական, 1 ավագ դպրոց, նախակրթարան, մանկապարտեզ, արվեստի մանկական 2 դպրոց, մանկապատանեկան մարզադպրոց, 3 գրադարան, մշակույթի տուն, հիվանդանոց, պոլիկլինիկա, հիգիենիկ-հակահամաճարակային հսկողության կենտրոն:

Եղվարդով անցնում են Արզնի-Շամիրամ ջրանցքը և Մասիս-Նուռնուս երկաթգիծը:

Արագյուղ գյուղ

Վարչական տարածքը՝ 17.52կմ²: Բնակչությունը զբաղվում է հացահատիկի մշակմամբ, պտղաբուծությամբ և անասնապահությամբ:

Գյուղում գործում են՝ 1 դպրոց, 1 մշակույթի տուն, 1 գրադարան:

Բուժական գյուղ

Վարչական տարածքը՝ 39.66կմ²: Բնակչության զբաղմունքը՝ հողագործություն և անասնապահություն: Գյուղում գործում են՝ 1 դպրոց, 1 մշակույթի տուն:

Զովունի գյուղ

Վարչական տարածքը՝ 13.84կմ²

Բնակչության կազմը՝ հայեր, եզդիներ: Բնակչության հիմնական զբաղմունքը՝ հողագործություն և անասնապահություն: Գործում են նաև արտադրական ձեռնարկություններ - "Մետաղամանեղեն գործարան" ԲԲԸ, "Ույուտ" արտադրական կոոպերատիվ, "Նորմա կաթ" ՍՊԸ, "Նաիրիի բերրիություն" ՍՊԸ, "Թամարա և Անի" ՍՊԸ, "Ունիվերսալ" ՍՊԸ, "Ագրոիմպուլս" ՍՊԸ:

Գործում են՝ միջնակարգ դպրոց, մսուր-մանկապարտեզ, արվեստի դպրոց, մշակութային տուն, հուշարձան համալիր կից թանգարանով:

Զորավան գյուղ

Վարչական տարածքը՝ 3801,9 հա

Բնակչության կազմը՝ հայեր, եզդիներ: Բնակչության հիմնական զբաղմունքը՝ հողագործություն և անասնապահություն: Գործում է մեկ արտադրական ձեռնարկությունը - "Եղվարդ Համալիր" ՍՊԸ:

Գործում են՝ միջնակարգ դպրոց, մուր-մանկապարտեզ, մշակութային տուն:

Մարալանջ գյուղ

Վարչական տարածքը՝ 1617.87 հա

Բնակչության կազմը՝ հայեր, ռուսներ, ուկրաինացի, հույն: Բնակչության հիմնական զբաղմունքը՝ անասնապահություն և հողագործություն: Գործում է միջնակարգ դպրոց:

Պռոշյան գյուղ

Վարչական տարածքը՝ 11.88կմ², հեռավորությունը Եղվարդից՝ 13 կմ

Բնակչությունը զբաղվում է խաղողագործությամբ և անասնապահությամբ: Գյուղում գործում է Պռոշյանի կոնյակի գործարան:

Գործում են՝ միջնակարգ դպրոց, մուր-մանկապարտեզ, արվեստի դպրոց, գրադարան:

Քասախ գյուղ

Վարչական տարածքը՝ 1217,86 հա, հեռավորությունը Եղվարդից՝ 13 կմ

Բնակչության կազմը՝ հայեր: Բնակչության հիմնական զբաղմունքը՝ այգեգործություն, անասնապահություն: Գործում են՝ 2 միջնակարգ դպրոց, 1 մուր-մանկապարտեզ, մշակույթի կենտրոն, ծանրամարտի մարզասրահ:

Համայնքի սոցիալ-տնտեսական բնութագիրը բերված է 4.1-4.3 աղյուսակներում՝ ըստ 2022-2026թթ. զարգացման ծրագրի, 2019թ. դրությամբ [5]:

ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Աղյուսակ 4.1

1. Մշտական բնակչության թվաքանակը	25993
2. Գրանցված ծնունդների քանակը	322
2. Մահացության դեպքերի քանակը	176
3. Ամուսնությունների քանակը	119
4. Ամուսնալուծությունների քանակը	28
5. Տնային տնտեսությունների թիվը	6167
6. Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը	519
7. Կենսաթոշակառուների քանակը	2197
8. Հաշմանդամություն ունեցող անձանց քանակը	2616

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԿՐԹԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աղյուսակ 4.2

1. Գրադարանների քանակը	5
2. Արվեստի դպրոցների քանակը	2
3. Երաժշտական դպրոցների քանակը	1
4. Նախադպրոցական հիմնարկների քանակը	3
5. Հանրակրթական դպրոցների քանակը	8
6. Նախնական մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը	1
7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը	-
8. Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը	-
9. Մարզադպրոցների քանակը	1

ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Աղյուսակ 4.3

1. Հողեր, ընդամենը (հա)	20597.06
2. Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա)	16708.96
3. Բնակավայրերի ընդհանուր տարածքը (հա)	1740.25
4. Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը	7941
6. Մանր եղջերավոր անասունների (ոչխար և այծ) գլխաքանակը	5109
7. Խոզերի գլխաքանակը	3154
8. Գյուղատնտեսական տեխնիկայի քանակը	70
այդ թվում տրակտորներ	60
կոմբայներ	10
9. Գյուղացիական տնտեսությունների թիվը	4425

ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

Աղյուսակ 4.4

1. Էլեկտրական ենթակայանների քանակը	167
2. Համայնքում գազիֆիկացման առկայությունը (այո, ոչ)	այո
3. Համայնքում աղբավայրի առկայությունը (այո, ոչ)	այո
4. Գերեզմանատան առկայությունը համայնքում (այո, ոչ)	այո
5. Համայնքային ենթակայության ճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	185.1
6. Կոմունալ և ճանապարհաշինական տեխնիկայի առկայությունը	
6.1 Ինքնաթափ բեռնատար մեքենաների քանակը	1
6.2 Էքսկավատորների քանակը	-
6.3 Թրթուրավոր տրակտորների քանակը	-
6.4 Գրեյդերների քանակը	1
6.5 Աղբատար մեքենաների քանակը	1
6.6 Բազմաֆունկցիոնալ կոմունալ մեքենաների քանակը	-
6.7 Վակուումային փոշեկուլ մեքենաների քանակը	-
6.8 Ավտոաշտարակների քանակը	1
7. Համայնքի տարածքով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	70
8. Համայնքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի առկայությունը	3
9. Ներհամայնքային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	այո

5. ՆԱԽԱԳԾԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

5.1. ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒՄԸ

Եղվարդ քաղաքի արդյունաբերական գոտում նախատեսվում է կառուցել բիտումի օքսիդացման գործարան, որի տարածքում նախատեսվում է նաև յուղերի փաթեթավորման տեղամաս:

Արտադրամասը աշխատելու է տարեկան 300 օր, օրը 24 ժամ՝ երեք 8-ժամյա հերթափոխով: Արտադրամասի նախագծային արտադրողականությունը կազմում է՝

տարեկան - 240.0 հազ.տ տարբեր նշանակության բարձրորակ բիտումներ

ամսական – 20.0 հազ.տ

օրական – 800 տ

ժամային – 34 տ

Բարձրորակ հումքը նախատեսվում է ներմուծել Իրաքից և Իրանից:

Տարբեր բիտումների ստացման համար օգտագործվելու են VACUUM BOTTOM կամ VACUUM RESIDUE մակնիշի հումքերը: Հումքերի բնութագիրը բերված է 5.1 աղյուսակում:

Հումքի բնութագիրը

Աղյուսակ 5.1

Հումքի անվանումը	Խտություն, °API	Կինեմատիկ մածուցիկությունը՝ 100°C տակ, մմ ² /վրկ	Բոցավառման կետ, °C	Ծծմբի պարունակություն, %
VACUUM BOTTOM, Իրան	1.030	20-47	210	0.38
VACUUM RESIDUE, Իրակ	0.9705	32.73	190	0.5

Տարբեր մակնիշների ստացվող բիտումների քանակությունները կախված են շուկայական պահանջարկից և նախապես ստացված պատվերներից:

Բիտումի ստացումը նախատեսվում է BLOWING տեխնոլոգիայով, որը հիմնված է ամերիկյան ստանդարտների վրա և ներառում է հումքի տաքացումը մինչև 200 C ° և օքսիդացումը տաք օդի ճնշման շնորհիվ: Օքսիդացումը իրականացվում է փակ բուրգերի մեջ, որի արդյունքում ստացված նյութը սառչելուց հետո դառնում է պինդ և տարբեր եղանակային պայմանների նկատմամբ դիմացկուն բարձրորակ բիտում:

Ստացված պատրաստի բիտումում ինչքան բարձր լինի ծծմբի պարունակությունը, այնքան բարձր կլինի բիտումի որակը:

Առաջացած գերթեթև գոլորշիները, որոնք կազմում են արտադրության ընդհանուր ծավալի 0.01%, անցնում են փակ ցիկլով՝ նախ ճնշման աշտարակներով, այնուհետև

կոնդենսացման տանկով: Ջրազրկված գազերը մտնում են ներքին այրման աշտարակ, որտեղ 870°C ջերմաստիճանում գազերը այրվում են: Մակայն որպեսզի խուսափեն թերայրումից, երբ հնարավոր է առաջանան դիօքսիդի արտանետումներ մթնոլորտ, այրումը իրականացնում են 1000 °C ջերմաստիճանի տակ, 2 վրկ ժամանակահատվածում:

Կոնդենսատորում կուտակված նստվածքը պարբերաբար հանվում է և պահեստավորվում, այն իրենից ներկայացնում է Cst 380 մակնիշի մագուր: Ամեն 1500տ քիտումի օկսիդացումից առաջանում է 5տոնա մագուր, կամ տարեկան 800 տոննա

Տվյալ պայմաններում տեղի է ունենում ամբողջական այրում: Դա թույլ է տալիս գրեթե բացառել վնասակար գազերի արտանետումը տեխնոլոգիական գործընթացից. CO₂ արտանետումները՝ ամբողջությամբ, իսկ ծծմբային անհիդրիդի արտանետումները՝ կամ բացառել, կամ հասցնել նվազագույնի: Բիտումի գործարանի շահագործումը առանց այրման վառարանի արգելվում է: Ներքին այրման վառարանի բարձրությունը 8մ է, տրամագիծը՝ 2.8մ: Ծխնելույզի բարձրությունը՝ 30 մ, տրամագիծը սկզբնական մասում՝ 1,4 մ, իսկ վերջնական մասում՝ 1,1 մ:

Տվյալ նախագծային լուծումները թույլ են տալիս.

1. Ապահովել ծծմբի կլանումը և ստանալ բարձրորակ բիտում,
2. Կտրուկ նվազեցնել արտադրամասի ազդեցությունը մթնոլորտային օդի վրա:
3. Գազերի արտանետումները մթնոլորտ հիմնականում տեղի են ունենալու բնական գազի այրումից, որով աշխատելու է ներքին այրման վառարանը (աշտարակը):

Արտադրամասում նախատեսվող հիմնական սարքավորումների ցանկը բերված է աղյուսակ 5.2-ում:

Բիտումի արտադրամասում օգտագործվող սարքավորումներ

Աղյուսակ 5.2

h/h	Անվանումը	Քանակը	Տարողությունը, մ ³	Ծանոթություն
1	Ճնշման աշտարակ	2	112 մ ³ (100 տ)	
2	Կոնդենսացման տանկ	2	4 մ ³ (5 տ)	
3	Անջատման տանկ	1	8 մ ³ (7.5 տ)	
4	Ներքին այրման աշտարակ	1	հզոր. 3 մլն.Կկալ	
5	Վերնահոս տարողություն	1	10 մ ³ (8տ)	
6	Նախնական տաքացուցիչ	1	հզոր. 2.5 մլն.Կկալ	
7	Յուղի բոյլեր	3	հզոր. 2.3 մլն.Կկալ	
8	Օդի կոմպրեսոր	2	44 մ ³ /րոպե	250 կՎտ
9	Հումքի պահեստարան	2	1000 մ ³	ստորգետնյա
10	Պատրաստի արտադրանքի պահեստարան	2	500 մ ³	ստորգետնյա
11	Մնուցման ռեզերվուար	1	200 մ ³	ստորգետնյա
12	Հումքի տեղափոխման պոմպ	4	1 մ ³ /րոպե	37 կՎտ
13	Պատրաստի բիտումի տեղափոխման պոմպ	2	0.4 մ ³ /րոպե	11 կՎտ
14	Հումքի դատարկման տարողություն	1	9 մ ³	
15	Հակահրդեհային պահեստարան	2	500 մ ³	ստորգետնյա

Սարքավորումների աշխատանքը ավտոմատացված է:

5.2. ԳՈՐԾԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Գործարանի էլեկտրամատակարարումն իրականացվելու է Եղվարդի քաղաքային էլեկտրացանցից՝ սեփական ենթակայանի միջոցով:

Գործարանի ջրամատակարարումն իրականացվելու է քաղաքային խմելու-տնտեսական համակարգից: Խմելու որակի ջուրն օգտագործվելու է միայն աշխատողների տնտեսա-կենցաղային կարիքների համար, արտադրական նպատակների համար ջուր չի պահանջվում: Առաջացած կենցաղային կեղտաջրերի համար նախատեսված է 3 սեպտիկ հոր՝ ստորգետնյա լցարաններով:

Քսայուղերի արտադրամասը տեղադրվելու է 446.6մ² մակերեսով փակ մասնաշենքում, որն օժտված է օդափոխության համակարգով:

Բիտումի արտադրությունը բացօդյա է:

Օժանդակ ծառայություններից գործարանում նախատեսված են փորձարկման լաբորատորիան և պահեստները:

Աշխատողների համար նախատեսվում են ցնցուղարաններ, ճաշարան և դահլիճ:

Նախատեսված է հրաշիջման կայան՝ սեփական հրաշիջման մեքենայով և 2 հատ 500մ³-նոց ստորգետնյա ռեզերվուար մշտական ջրի պաշարով:

Հեղեղաջրերի հավաքման, մաքրման և հետագա օգտագործման նպատակով նախատեսված է հեղեղային կոյուղի՝ մաքրման կայանով:

Գործարանի արտհրապարակը նախատեսվում է բարեկարգել և մոտ 1000մ² կանաչապատել՝ գազոններով և պտղատու ծառերով:

5.3. ՅՈՒՂԵՐԻ ՏԵՂԱՄԱՍ

Յուղի արտադրությունը գործարանում հիմնված է համաշխարհային բարձր ստանդարտների վրա և աշխատում է որպես Blending, որի ընթացքում տարբեր հավելանյութերի և յուղի հիմնական հումքի խառնման ընթացքում ստանում ենք տարբեր յուղեր՝ շարժիչային, հիդրավլիկ, փոխանցման տուփի, արդյունաբերական, և այլն:

Փակ տարաների մեջ կատարվում է հավելանյութերի և յուղի հումքի խառնում, որի արդյունքում, կախված հավելանյութերի տեսակից, քանակից և ժամանակից, ստանում են միջազգային ստանդարտի համապատասխան արտադրանքը՝

- API (American Petroleum Institute)

- JASO (JAPANESE AUTOMOTIVE STANDARD ORGANIZATION)
- ILSAC (International Lubricants Standardization and Approval Committee)
- ACEA (Association des Constructeurs Europeens de l'Automobile)

Պատրաստի արտադրանքը խողովակների միջոցով տեղափոխվում է փաթեթավորման հոսքագիծ, որի օգնությամբ լիցքավորվում են տարբեր տարողության տարաներ՝ 1, 4, 5, 20 և 220 լ:

Որպես հավելանյութ, ըստ յուղի նշականության, ավելացնում են հակաօքսիդանտները, մածուցիկության կարգավորիչը, դեպրեսանտները, դիսպերգենտները և դետերգենտները, փրփրամարիչները, էմուլսիֆիկատորները և դեէմուլսիֆիկատորները, ինչպես նաև հակակոռոզիոն և մաշակայունությունը բարձրացնող հավելանյութերը:

Հումքը նախատեսվում է ներմուծել Իրանից: Հումքի բնութագիրը բերված է աղյուսակ 5.3-ում:

Հումքի բնութագիրը

Աղյուսակ 5.3

Բազային յուղի անվանումը	Խտություն, գ/մ ³	Կինեմատիկ մածուցիկություն, մմ ² /վրկ		Բոցավառման կետ, °C	Ծծմբի պարունակություն, %
		40°C տակ	100°C տակ		
Base oil SN-100	0.845-0.870	18.2-22.4	3.8-4.3	≥ 190	0.35
Base oil SN-150	0.860-0.875	28.8-33.5	5.0-5.5	≥210	0.45
Base oil SN-350		60-70		≥230	≤0.4
Base oil SN-500	0.883		10.1-11.0	≥240	≤0.95
Base oil SN-650	0.885-0.900	≥135	13.0-16.2	≥220	0.65

Պատրաստի արտադրանքի բնութագիրը

Յուղի արտադրամասի արտադրողականությունը կկազմի տարեկան 60.0 հազ.տ, ամսական՝ 5000 տոննա բարձրորակ յուղ, հետևյալ ապրանքատեսակներից.

- Բենզինային շարժիչի յուղեր՝ SJ, SL, SM, SN ստանդարտով
- Դիզելային շարժիչի յուղեր՝ CD, CE ստանդարտով
- Հիդրավլիկ յուղեր
- Արգելակման հեղուկներ
- Ավտոմատ և ոչ ավտոմատ փոխանցման տուփի յուղեր
- Արդյունաբերական յուղեր

Յուղի արտադրամասում օգտագործվող սարքավորումներ

Աղյուսակ 5.4

h/h	Անվանումը	Քանակը, հատ	Տարողություն, մ ³	Ծանոթություն
1	Խառնիչ	6	15	
2	Արտադրանքի պահեստարան	7	15	Ստորգետնյա
3	Հավելանյութերի խառնիչ	3	5	
4	Հումքի նախնական տաքացման տարողություն	1	18	
5	Ելակետային յուղի պահեստարան	12	100	Ստորգետնյա
6	Հավելանյութերի տարողություն	1	6	
8	Օդի կոմպրեսոր	1	44 մ ³ /րոպե	250 կՎատ
9	Օդի չորուցիչ	1		
10	Լիցքավորման և փաթեթավորման գիծ	5	1-ից մինչև 5 լիտր	
11	Լիցքավորման և փաթեթավորման գիծ	1	5-ից մինչև 20 լիտր	
12	Լիցքավորման և փաթեթավորման գիծ	1	220 լիտր	
13	Օդաճնշման փականների կառավարման գործիքային համակարգ			

Գործարանում գործելու են ցնցուղարաններ, ճաշարան: Տարածքի 1000մ² կանաչապատվելու է:

6. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

1. Նախկինում աղբավայրի վերածված տարածքը ընկերության կողմից ամբողջապես մաքրվել է, վերացվել է աղբավայրի ազդեցությունը շրջակա միջավայրի վրա:

2. Բիտումի ստացման տեխնոլոգիական շղթան ներառում է արտանետվող գազերի ներքին այրման աշտարակը, որը թույլ է տալիս նվազագույնի հասցնել արտանետումները մթնոլորտ:

3. Վերամշակման ենթակա հումքը և պատրաստի արտադրանքը պահվելու են հերմետիկ, մետաղյա ստորգետնյա ցիստեռներում (արևի ուղիղ ճառագայթներից, ջերմաստիճանների կտրուկ տատանումներից և այլ անբարենպաստ եղանակային պայմանների ազդեցությունից պահպանելու համար):

4. Ցիստեռներում անհրաժեշտ է թողնել 5%-ից ոչ պակաս ազատ ծավալ՝ հումքի հնարավոր ընդարձակման համար:

5. Քսայուղերի տեղամասում հավելանյութերի ավելացումը հումքին իրականացվում է փակ տարողություններում, տեխնոլոգիական գործընթացը ամբողջությամբ ավտոմատացված է, քսայուղերի պատրաստումից վնասակար արտանետումները շրջակա միջավայր բացակայում են:

6. Գործարանում կրրառվում են սարքավորումների յուղային և օդային հովացման համակարգեր, արտադրական կարիքների համար ջուր չի պահանջվում, արտադրական կեղտաջրեր չեն առաջանում:

7. Կենցաղային կարիքներից առաջացած կեղտաջրերի համար նախատեսվում է տեղադրել 3 հատ ստորգետնյա լցարան, որտեղից կեղտաջրերը պարբերաբար տեղափոխվելու են մոտակա կանոնավար գործող աերացիայի կայան:

8. Գործարանի տարածքում նախատեսվում է դրենաժային համակարգ՝ հեղեղային ջրի հավաքման և մաքրման համար: Տեղադրվելու է 2000մ³ ստորգետնյա տարողություն, որտեղ հավաքվելու են մաքրված տեղումների ջրերը՝ հավաքված և մաքրված հեղեղաջրերը օգտագործվելու են ոռոգման, ջրցանման նպատակներով և հրշեջ ռեզերվուարների լրասնուցման համար:

9. Խմելու ջրի մատակարարման խողովակի վրա տեղադրվելու է ջրաչափիչ՝ մատուցվող ջրաքանակի մշտական հսկման համար:

10. Կոնդենսացման աշտարակում հավաքված մնացորդը իրենից ներկայացնում է Cst 380 մակնիշի մագուիթ, որը պահեստավորվում է և վաճառվում:

11. Գործարանի տարածքը բարեկարգվելու է, 1000մ² կանաչապատվելու է, որից 400մ² լինելու են պտղատու ծառեր, իսկ մնացածը՝ գազոն:

7. ՀԱԿԱՎԹԱՐԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Քսայուղերի և բիտումի գործարանը պատկանում է հրդեհավտանգ արտադրությունների շարքին:

- ✓ Արտադրամասը ապահովված է փրկաելքերով; պատերին փակցված պետք է լինեն տեղահանման քարտեզ-սխեմաներ:
- ✓ Գործարանում նախատեսված են ներքին և արտաքին հրաշիջման համակարգեր, ջրամատակարարման օղակաձև ցանցի ջրհորներում նախատեսվում է տեղադրել հակահրդեհային հիդրանտներ:
- ✓ Հաշվի առնելով արտադրության հրդեհավտանգությունը, արտաքին հրդեհի մարման համար արտհրապարակում նախատեսված է հակահրդեհային կայան՝ իր հրշեջ մեքենայով: Հրդեհաշիջման համար նախատեսվում են 2 հատ 500մ³-նոց ստորգետնյա թիթեղային տարողություններ:
- ✓ Բոլոր շինությունները պետք է ունենան հողանցում և շանթապաշտպանություն:

- ✓ Արտադրամասում պետք է լինեն կրակմարիչներ, ավազով արկղ, բահ և այլն:
- ✓ Բոլոր բանվորները պետք է ապահովված լինեն հատուկ բանվորական արտահագուստով, կոշիկներով, սաղավարտով, ակնոցներով:
- ✓ Մինչև աշխատանքի անցնելը, աշխատակիցները պետք է հրահանգավորված լինեն աշխատանքի անվտանգության կանոնների մասին:
- ✓ Մինչև 18 տարեկան անձանց արգելվում է աշխատել տվյալ գործարանում:
- ✓ Ձեռնարկությունը արտակարգ իրավիճակների ծառայության հետ համատեղ պետք է մշակի վթարների վերացման սցենար ու անցկացնի վարժանքներ:

8. ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕՂԻ ՎՐԱ

8.1. ԲԱԺՆԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Բաժինը մշակված է՝

- «Արմոյլ» ՓԲԸ-ի արտադրության նախագծի հիման վրա,
- Տեղանքի հատակագծի հիման վրա,
- Նախագծվող արտադրամասի գտնվելու շրջանի ֆիզիկա-աշխարհագրական և կլիմայական բնութագրերի հիման վրա:

Մթնոլորտ վնասակար արտանետումները հաշվարկված են գործող մեթոդակարգերի համաձայն [6]:

Քսայուղերի տեղամաս. վնասակար գազերի արտանետումները բացակայում են:

Բիտումի արտադրամաս. Արտադրամասի արտադրողականությունը տարեկան 240.0 հազ.տ (ամեն աշտարակ 120.0 հազ.տ): Ռեժիմը՝ 3 հերթափոխով, 300օր/տարի

Բիտումի ստացման տեխնոլոգիան հիմնված է ամերիկյան ստանդարտների վրա և աշխատում է հումքի տաքացմամբ և տաք օդի ճնշման տակ օքսիդացմամբ:

8.2. ՇՐՋԱՆԻ ՖԻԶԻԿԱ-ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԵՎ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Տեղանքի ռելիեֆի գործակիցը.

Տեղանքի ռելիեֆի բարձրությունների տարբերությունները 2 կմ շառավղով տարածքի վրա չի գերազանցում են 50 մ-ը, այդ իսկ պատճառով տեղանքի ռելիեֆի գործակիցը ընդունված է 1.0:

Մթնոլորտում աղտոտող նյութերի ցրման պայմանները որոշող օդերևութաբանական բնութագրերը և գործակիցները բերված են աղյուսակ 8.1-ում:

**Տարածքի մթնոլորտում աղտոտող նյութերի ցրման պայմանները
որոշող օդերևութաբանական բնութագրերը և գործակիցները**

Աղյուսակ 8.1

№№	Բնութագրերի անվանումը	Մեծությունը
1	Մթնոլորտի շերտաբաշխումից կախված գործակիցը, A	200
2	Տեղանքի ռելիեֆի գործակիցը	1
3	Տարվա ամենաշոգ ամսվա դրսի օդի միջին առավելագույն ջերմաստիճանը, T °C	22,8
4	Միջին տարեկան քամիների փնջագիրը (վարդը)	
	Հյուսիս	1,7
	Հյուսիս-Արևելք	1,8
	Արևելք	1,7
	Հարավ-Արևելք	1,5
	Հարավ	1,7
	Հարավ-Արևմուտք	1,9
	Արևմուտք	1,8
	Հյուսիս-Արևմուտք	1,8
5	Քամու արագությունը, որի կրկնողության գերազանցումը կազմում է 5%, մ/վ	6
6	Քամու բազմամյա միջին առավելագույն արագությունը (մ/վ), որի հնարավոր է 25 տարին մեկ անգամ (5% ապահովվածությամբ)	23

8.3. ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕՐԻ ԱՂՏՈՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ

Եղվարդ քաղաքի տարածքում մթնոլորտն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաների արժեքները, մգ/մ³, վերցված են ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության <<Հիդրոօդերևութաբանական և մոնիթորինգի կենտրոն>> ՊՈԱԿ-ի կայքէջից (ըստ բնակչության քանակի) :

Ֆոնային կոնցենտրացիայի արժեքներն են. փոշի 0.3 մգ/մ³, ծծմբի երկոքսիդ 0.05մգ/մ³, ազոտի օքսիդներ՝ 0.015 մգ/մ³, ածխածնի օքսիդ՝ 0.8 մգ/մ³:

Եղվարդ գյուղի բնակչության թիվը կազմում է 12106 մարդ (2022թ):

8.4. ՄԹՆՈԼՈՐՏ ՎՆԱՍԱԿԱՐ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Բիտումի օքսիդացման համար ճնշման տակ տալիս են տաք օդ՝ ջերմաստիճանը բուրգերի մեջ հասցնելով 200 °C:

Գործարանում օգտագործում է նաև բնական գազ.

1. Ներքին այրման աշտարակում (Աղբյուր B1)
2. Յուղի տեղափոխման խողովակների տաքացման համար (մինչև 100-120°C) (Աղբյուր B2)
3. Տաքացուցիչներում (Աղբյուր B3)
4. Կաթսայում (Աղբյուր B4)

Մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի հաշվարկը բերված է 8.2 աղյուսակում [6,7]:

Մթնոլորտ արտանետումներ (աղբյուր B1-B4)

Աղյուսակ 8.2

Ցուցանիշի անվանումը	Նշանակումը	Չափման միավորը	Բանաձևը	Մեծությունը			
				B1	B2	B3	B4
1	2	3	4	5	6	7	8
1. Բաժնի աշխատաժամեր	T	Ժ/տարի	Նախագծային տվյալներ	5400	1800	1800	900
2. Գազի ծախս	A	մ ³ /ժամ	Նախագծային տվյալներ	30	70	70	20
	A ₁	մ ³ /տարի	Նախագծային տվյալներ	30×5400=162000	126000	126000	1800
3. Տեսակարար արտանետումները.							
-ածխածնի օքսիդ	Q ₁	գ/մ ³	Մեթոդակարգ	12.9	12.9	12.9	12.9
-ազոտի օքսիդներ	Q ₂	գ/մ ³	Մեթոդակարգ	2.15	2.15	2.15	2.15
4. Արտանետվող նյութերի քանակը							
-ածխածնի օքսիդ	M _{CO}	գ/վրկ	$M_{CO} = Q_1 \cdot A / 3600$	0.107	0.25	0.25	0.072
	M _{CO}	տ/տարի	$M_{CO} = Q_1 \cdot A_1 / 10^6$	2.09	1.63	1.63	0.023
-ազոտի օքսիդներ	M _{NOX}	գ/վրկ	$M_{NOX} = Q_2 \cdot A / 3600$	0.018	0.042	0.042	0.012
	M _{NOX}	տ/տարի	$M_{NOX} = Q_2 \cdot A_1 / 10^6$	0.35	0.27	0.27	0.0039

Բիտումի օքսիդացման արդյունքում առաջացող CO և H₂S ամբողջովին այրվում են ներքին այրման վառարանում:

Այրման արդյունքում հնարավոր է SO₂ որոշ քանակի արտանետում մթնոլորտ [7] (Աղբյուր B1):

Մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակը և բնութագիրը բերված է 8.3 աղյուսակում:

Վնասակար արտանետումների վտանգավորության դասը և տարեկան քանակը բերված են 8.4 աղյուսակում:

Մթնոլորտ վնասակար արտանետումների աղբյուրների տեղաբաշխումը ցույց է տրված իրադրային հատակագծի վրա (հավելված):

Մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի աղբյուրները

Աղյուսակ 8.3

Ձեռնարկության արտադրամասի անվանումը	Արտանետման աղբյուրների համարը քարտեզ-սխեմայի վրա	Արտանետումների բարձրությունը հողի մակերևույթից H, մ	Խողովակի էլանցքի տրամագիծը, մ	Աղբյուրից արտանետվող խառնուրդի ծավալը, մ ³ /վրկ	Խառնուրդի ջերմաստիճանը T°C	Կոորդինատները քարտեզ-սխեմայի վրա		Մաքրման սարքավորումները, անվանումը, տեսակը	Նյութերը, որոնք ենթարկվում են գազամաքրման	Միջին շահագործային մաքրման աստիճան %	Աղտոտող նյութերի անվանումը	Արտանետումներ	
						X ₁	Y ₁					գ/վրկ	տ/տարի
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
1. Բնցիներատոր (ներքին այրման աշտարակ)	B1	30	1.1	5.7	30						Ածխածնի օքսիդ	0.1075	2.09
											Ազոտի օքսիդներ	0.018	0.35
											Ծծմբային անհիդրիդ	0.025	0.78
2. Տաք յուղի բաժին	B2	9	0.5	1.18	80						Ածխածնի օքսիդ	0.25	1,63
											Ազոտի օքսիդներ	0,042	0,27
3. Տաքացուցիչ	B3	6	0.5	0.98	100						Ածխածնի օքսիդ	0,25	1,63
											Ազոտի օքսիդներ	0,042	0,27
4. Կաթսա	B4	9	0.5	1.18	80						Ածխածնի օքսիդ	0,072	0,023
											Ազոտի օքսիդներ	0,012	0,0039

Մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի տարեկան քանակը

Աղյուսակ 8.4

Հ/Հ	Վնասակար նյութերի անվանումը	Վտանգավորության դասը	ՄԹԿ մ.մ, մգ/մ ³	Արտանետումները մթնոլորտ, տոննա/տարի
1.	Ազոտի օքսիդներ	2	0.2	0.894
2.	Ածխածնի օքսիդ	4	5.0	5.373
3.	Ծծմբային անհիդրիտ	3	0.5	0.78
	ԸՆԴԱՄԵՆԸ			7.047

Արտանետումների տարեկան քանակը կազմում է 7.047 տ/տարի:

8.5. ՄԵՐՁԳԵՏՆՅԱ ԿՈՆՑԵՆՏՐԱՑԻԱՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Մթնոլորտն աղտոտող արտանետումների ցրման հաշվարկը կատարվել է համակարգչային՝ «Էկոլոգ 4.6» ծրագրով, աղյուսակ 8.3-ում բերված տվյալների հիման վրա, մեկ արտհրապարակի համար:

Վնասակար նյութերի մերձգետնյա կոնցենտրացիաները որոշվել են ինչպես հաշվարկային հարթակի մակերեսով, այնպես էլ հանձնարարված հաշվարկային կետերում, որոնք գտնվում են մոտակա բնակելի տարածքում:

Հաշվարկների արդյունքներն ամփոփ տեսքով բերված են 8.5 աղյուսակում, մերձգետնյա կոնցենտրացիաների համակարգչային հաշվարկների արդյունքները՝ հավելվածում:

Մթնոլորտ վնասակար նյութերի ցրման հաշվարկների արդյունքում հաստատված է, որ սպասվելիք մերձգետնյա կոնցենտրացիաները գտնվում են սահմանված նորմերում:

Աղտոտվածության մակարդակն արտադրության գոտու եզրագծում կազմելու է 0.08÷0.34 ՄԹԿ միավոր, իսկ մոտակա բնակելի գոտում 0.05÷0.19 ՄԹԿ միավոր:

Մեքենայական մերձգետնյա կոնցենտրացիաների հաշվարկների արդյունքները

Աղյուսակ 8.5

h/h	Վնասակար նյութեր	Հաշվարկային առավելագույն մերձգետնյա կոնցենտրացիաները ՄԹԿ միավորով	
		Արդհարթակի վրա	Մոտակա բնակելի գոտում
1.	Ազոտի օքսիդ	0.34	0.19
2.	Ածխածնի օքսիդ	0.08	0.05
3.	Ծծմբային անհիդրիդ + Ազոտի օքսիդ*	0.21	0.12

*Համաձայն ծրագրով կատարված հաշվարկների ծծմբի անհիդրիդի արտանետումների հաշվարկը տվել է զրոյական արդյունք, սակայն ծծմբային անհիդրիդ + ազոտի օքսիդ ունեն գումարային էֆեկտ և աղյուսակում բերված արդյունքը կազմում է 0,21ՄԹԿ, իսկ մոտեկա բնակելի տարածքում՝ 0,12ՄԹԿ:

8.6. ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Ըստ РД 52.04.52-85, անբարենպաստ օդերևութաբանական պայմաններում (ՍՕՊ) նախատեսվում են միջոցառումներ՝ ուղղված աղտոտող նյութերի կոնցենտրացիաների նվազեցմանը մթնոլորտի մակերևութային շերտում: Արտանետումների կարգավորումը կատարվում է ՍՕՊ-ի կանխատեսման հիման վրա: Ձեռնարկությունում արտանետումների կարգավորման հարցը դեկավարության հրամանով դրվում է պատասխանատու անձի վրա, ով պետք է մշտական կապ պահպանի «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի» հետ:

I ռեժիմի ՍՕՊ – նախատեսվում է վնասակար նյութերի արտանետումների կոնցենտրացիաների կրճատում 15-20 %-ով: Անհրաժեշտ է կատարել հետևյալ միջոցառումները.

- թույլ չտալ սարքավորումների գերբեռնված աշխատանք,
- խստորեն հետևել տեխնոլոգիայի գործընթացին:

II ռեժիմի ՍՕՊ – կատարվում են բոլոր աշխատանքները, որոնք նախատեսված են I ռեժիմով՝ կրճատելով արտանետումների քանակը 20-40 %-ով:

- ուժեղացնել հսկողությունը բնական գազի այրման գործընթացի նկատմամբ:

8.7. ՍԱՆԻՏԱՐԱ-ՊԱՇՏՊԱՆԻՉ ԳՈՏԻ

Ըստ «Санитарные нормы проектирования промышленных предприятий» СН 245-71, որը գործում է ՀՀ տարածքում, բիտումի օքսիդացման համար սանիտարապաշտպանիչ գոտի չի նախատեսվում: Բացի այդ, ինչպես ցույց են տալիս հաշվարկները, արդեն իսկ արտադրական հրապարակում արտանետումների ցուցանիշները մի քանի անգամ ցածր են, քան ՍԹԿ-ները:

9. ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՎՐԱ

Սարքավորումների հովացման համակարգերը յուղային են կամ օդային, տեխնոլոգիական նպատակներով ջուր չի պահանջվում: Էքսպրես-լաբորատորիայում և այլ օժանդակ տեղամասերում ջուր չի պահանջվում:

Կանաչ տարածքի ոռոգման և արտհրապարակի ջրցանման համար օգտագործվելու է հեղեղային ջրերի մաքրման կայանի պարզվածքը:

Այսպիսով, արտադրական և սանիտարական նպատակներով թարմ ջրի ծախս նախատեսված չէ: Թարմ ջուրը ծախսվելու է միայն աշխատողների տնտեսա-կենցաղային կարիքների համար: Օգտագործվելու է խմելու որակի ջուր Եղվարդ քաղաքի խմելու-տնտեսական ջրամատակարարման համակարգից:

9.1. ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՏՆՏԵՍԱ-ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՊԱՀԱՆՁԸ

Խմելու որակի ջրի պահանջի հաշվարկ

Աղյուսակ 9.1

Թ/հ	Ցուցանիշի անվանումը	Նշանակումը	Չափման միավորը	Բանաձևը	Մեծությունը
1.	Աշխատողների խմելու-կենցաղային կարիքներ				
	Մեկ բանվորի համար ջրի նորմատիվ ծախսը	n ₁	լ/հերթ	ՀՀՇՆ 40.01.01-2014	25
	Մեկ վարչական աշխատողի համար ջրի նորմատիվ ծախսը	n ₂	լ/օր	ՀՀՇՆ 40.01.01-2014	16
	Աշխատողների հաստիքային թվաքանակը. որից բանվորներ՝ ԻՏԱ, ԿՍԱ, վարչ աշխատողներ	r		նախագծային տվյալներ	250 238 12
	Բանվորների թվաքանակը. որից 3-հերթափոխ.գրաֆիկով աշխատող մեկ կամ երկու հերթափոխով աշխատող	r _բ	մարդ	նախագծային տվյալներ	238 220 18
	Բանվորների օրական թվաքանակը	r ₁	մարդ/օր	220/4 x3 + 18	183
	Գործարանի աշխատանքային օրերի թիվը	T	օր/տարի	նախագծային տվյալներ	300
	Թարմ ջրի պահանջը բանվորների համար՝ Առավելագույն օրական Տարեկան	w _{1բ^{օր}} W _{1բ}	մ ³ /օր մ ³ /տարի	w _{1բ^{օր}} = n ₁ x r ₁ x 10 ⁻³ W _{1բ} = w _{1բ^{օր}} x T	4.575 1373
	վարչ. աշխատողների, ԻՏԱ, ԿՍԱ քանակը. որից 3-հերթափոխ.գրաֆիկով աշխատող մեկ կամ երկու հերթափոխով աշխատող	r _վ	մարդ	նախագծային տվյալներ	12 8 4
	ԻՏԱ, վարչ. աշխատողների, ծառայողների, ԿՍԱ օրական թվաքանակը	r ₂	մարդ/օր	8/4 x3 + 4	10
	Ջրապահանջը ԻՏԱ և ծառայողների համար՝ Առավելագույն օրական Տարեկան	w _{1վ^{օր}} W _{1վ}	մ ³ /օր մ ³ /տարի	w _{1վ^{օր}} = n ₂ x r ₂ x 10 ⁻³ W _{1վ} = w _{1վ^{օր}} x T	0.16 48
	Խմելու կարիքների համար ջրապահանջը՝ Առավելագույն օրական Տարեկան	w _{1^{օր}} W ₁	մ ³ /օր մ ³ /տարի	w _{1^{օր}} = w _{1բ^{օր}} + w _{1վ^{օր}} W ₁ = w _{1^{օր}} x T	4.735 1421
2.	Ցնցուղարաններ				
	Մեկ ցնցուղային ցանցի համար ջրի նորմատիվ ծախսը	n ₃	լ/ժ	ՀՀՇՆ 40.01.01-2014	500
	Ցնցուղային ցանցերի քանակը, յուրաքանչյուրը 4 ցնցուղագլխիկով	a	հատ	նախագծային տվյալներ	4
	Ցնցուղի աշխատանքի տևողությունը յուրաքանչյուր հերթափոխի ավարտին	t	րոպե	նախագծային տվյալներ	60
	Ցնցուղի աշխատանքի գործակից	k		k = t / 60 = 60 / 60	1.0
	Հերթափոխների թիվը օրվա ընթացքում	b	հերթ/օր	նախագծային տվյալներ	3
	Ցնցուղարանի համար թարմ ջրի պահանջը Օրվա ընթացքում Տարեկան	w _{2^{օր}} W ₂	մ ³ /օր մ ³ /տարի	w _{2^{օր}} = n ₃ x k x a x b x 10 ⁻³ W ₂ = w _{2^{օր}} x T	6.0 1800

Թ/հ	Ցուցանիշի անվանումը	Նշանակումը	Չափման միավորը	Բանաձևը	Մեծությունը
3.	Ճաշարան				
	Մեկ կերակրատեսակի պատրաստման համար ջրի ծախսի նորմատիվը	n ₄	լ	ՀՀՇՆ 40.01.01-2014	12
	Ճաշարանում նստատեղերի քանակը	N	տեղ	նախագծային տվյալներ	200
	Ճաշողների նստեցումների օրական թիվը	b	անգամ/օր	նախագծային տվյալներ	1
	Ճաշատեսակների քանակը հաշվի առնող գործակից	k ₁		ՀՀՇՆ 40.01.01-2014	2.2
	Ճաշարանի համար թարմ ջրի պահանջը Օրվա ընթացքում Տարեկան	w ₃ ^{օր} W ₃	մ ³ /օր մ ³ /տարի	w ₃ ^{օր} = n ₄ x k ₁ x N x b x 10 ⁻³ W ₃ = w ₃ ^{օր} x T	5.28 1584
	Ընդամենը թարմ ջուր՝ Առավելագույն օրական Տարեկան	w ₄ ^{օր} W ₄	մ ³ /օր մ ³ /տարի	w ₄ ^{օր} = Σw _{1,2,3} ^{օր} W ₄ = W ₁ +W ₂ +W ₃	16.0 4805

Քաղաքային ցանցից ստացվող թարմ խմելու ջրի պահանջը կազմում է՝

- ✓ տարեկան - 4805 մ³;
- ✓ առավելագույն օրական - 16.0 մ³;
- ✓ միջին ժամային - 0.67 մ³;
- ✓ վայրկենական - 0.19 լ;

9.2. ՄԱՔՐՎԱԾ ՀԵՂԵՂԱԶՐԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Գործարանի տարածքից հավաքվող և օգտագործվող հեղեղաջրերի քանակի հաշվարկ

Աղյուսակ 9.2

Ցուցանիշի անվանումը	Նշանակումը	Չափման միավորը	Բանաձևը	Մեծությունը
Տեղումների տարեկան քանակը	H	մմ	կլիմայական տվյալներ	436
1. Անձրևաջրերի արտահոսք				
Մթնոլորտային տեղումների քանակը տարվա տաք ժամանակահատվածում	H _{տաք}	մմ	կլիմայական տվյալներ, աղյուսակ 3.7	252
Ջրհավաք մակերեսը	F	հա	նախագծային տվյալներ	2.8
Մակերևույթների տեսակները հաշվի առնող գործակից	Ψ _տ	-	քառուցապատված մակերես, ասֆալտ [8, էջ 202]	0.85
Անձրևաջրերի արտահոսքը	W _{անձ.}	մ ³ /տարի	W _{անձ.} = 10 * Ψ _տ * H _{տաք} * F	5997.6
2. Չնհալի ջրերի քանակը				
Տեղումների քանակը տարվա ցուրտ ժամանակահատվածում	H _{ցուրտ}	մմ	կլիմայական տվյալներ, աղյուսակ 3.6	184
Չնհալքի արտահոսքի գործակից	Ψ _{ձն}	-	[8, էջ 202]	0.7
Չնհալի ջրերի արտահոսքը	W _{ձն}	մ ³ /տարի	W _{ձն} = 10 * Ψ _{ձն} * H _{ցուրտ} * F	3606.4
3. Ընդամենը արտհրապարակից				
Մաքրման կայանում հանվող նստվածքի քանակը	Ն	տ/տարի	[8, էջ 201]	3.96
Նստվածքի հետ հանվող ջրի քանակը	Ք	մ ³ /տարի	Նստվածքի խոնավությունը՝ 50%	4
4. Օգտագործման ենթակա մաքրված հեղեղաջրերի քանակը				
	W _{օգտ.}	մ ³ /տարի	W _{օգտ.} = W _{հեղ.} - Ք	9600

Մանիտարական կարիքների համար ջրապահանջի հաշվարկ

Աղյուսակ 9.3

Թ/հ	Ցուցանիշի անվանումը	Նշանակումը	Չափման միավորը	Բանաձև	Մեծությունը
1.	Կանաչ տարածքի ոռոգում				
	Կանաչ տարածքի մակերեսը այդ թվում՝ ծառեր խոտածածկույթ	S ₁ S _ծ S _խ	մ ²	նախագծային տվյալներ	1000 400 600
	Ջրի ծախսը 1մ ² ծառապատ տարածքի մեկ ջրման համար	n ₅	լ/մ ²	ՀՀՇՆ 40.01.01-2014 ՇՀԻՊ 2.04.02-84 [9]	15
	Ջրի ծախսը 1մ ² խոտածածկույթի մեկ ջրման համար	n ₆	լ/մ ²	ՀՀՇՆ 40.01.01-2014 ՇՀԻՊ 2.04.02-84	6
	Ոռոգումներով օրերի թիվը	T ₁	օր/տարի	կլիմայական պայմաններ	180
	Ոռոգման օրական հաճախությունը. ամենաշոգ, չոր եղանակներին մնացած օրերին	b ₁ b ₂	անգամ/օր	կլիմայական տվյալներ	2 1
	Ամենաշոգ, չոր օրերի թիվը	t ₁	օր	կլիմայական տվյալներ	100
	Օրը մեկ անգամ ոռոգման օրերի թիվը	t ₂	օր	t ₂ = T ₁ - t ₁	80
	Օրական ջրապահանջը Առավելագույն՝ 100 օրվա ընթացքում Նվազագույն՝ 80 օրվա ընթացքում	w ₁ ^{օր ան} w ₁ ^{օր նվ}	մ ³ /օր	w ₁ ^{օր ան} = (n ₅ · S _ծ + n ₆ · S _խ) · b ₁ w ₁ ^{օր նվ} = (n ₅ · S _ծ + n ₆ · S _խ) · b ₂	19.2 9.6
	Տարեկան ջրապահանջը	W ₁	մ ³ /տարի	W ₁ = w ₁ ^{օր ան} · t ₁ + w ₁ ^{օր նվ} · t ₂	2688
2.	Արտհրապարակի ջրցանում				
	Ջրի ծախսը 1մ ² ասֆալտապատված մակերեսի մեկ ջրցանման համար	n ₇	լ/մ ²	ՀՀՇՆ 40.01.01-2014	0.5
	Ջրցանվող հրապարակների մակերեսը	S ₂	մ ²	նախագծային տվյալներ	18000
	Ջրցանումներով օրերի թիվը	T ₂	օր/տարի	նախագծային տվյալներ	240
	Ջրցանման հաճախությունը	b ₃	անգամ/օր	նախագծային տվյալներ	2
	Տարեկան ջրապահանջը	W ₂	մ ³ /տարի	W ₂ = n ₇ · S ₂ · b ₃ · T ₂	4320
3.	Քսայաղերի արտադրամասի հիդրոմբրում				
	Ջրի ծախսը 1մ ² մակերեսի ճկապողով մեկ հիդրոմբրման համար	n ₈	լ/մ ²	գործնական տվյալներ,	0.5
	Հիդրոմբրման ենթակա մակերեսը	S ₃	մ ²	նախագծային տվյալներ	300
	Հիդրոմբրման հաճախությունը	T ₂ b ₄	օր/տարի անգամ/օր	ամեն օր, օրը մեկ անգամ նախագծային տվյալներ	300 1
	Տարեկան ջրապահանջը	W ₃	մ ³ /տարի	W ₃ = n ₈ · S ₃ · b ₄ · T ₃	45
4.	Օժանդակ տեղամասերի հիդրոմբրում				
	Ջրի ծախսը 1մ ² հատակի վրացման համար	n ₉	լ/մ ²	գործնական տվյալներ	0.2-0.3
	Հիդրոմբրման ենթակա մակերեսը	S ₄	մ ²	նախագծային տվյալներ	40
	Հիդրոմբրման հաճախությունը	T ₃ b ₄	օր/տարի անգամ/օր	2 օրը մեկ, օրը մեկ անգամ	150 1
	Տարեկան ջրապահանջը	W ₄	մ ³ /տարի	W ₄ = n ₉ · S ₄ · b ₄ · T ₄	≈ 2
5.	Մաքրված հեղեղաջրերի օգտագործում				
		W ₅		W ₅ = Σ W _i	7055

9600 մ³/տարի մաքրված հեղեղաջրերի 7055 մ³/տարի, կամ 73.5%, օգտագործվում է սանիտարական կարիքների համար, իսկ մնացորդն ուղղվում է հակահրդեհային ջրավազան:

9.3. ԶՐԱՀԵՌԱՑՈՒՄ

Գործարանի կեղտաջրերը ուղղվելու են 3 հատ ստորգետնյա կուտակիչ, որտեղից պարբերաբար տեղափոխվելու են մոտակա գործող աերացիայի կայան:

Լցարաններ ուղղվելու են տնտեսա-կենցաղային օգտագործումից և հատակների լվացումից առաջացած կեղտաջրերը, որոնք իրենց կազմով համապատասխանում են սիպիկ կենցաղային կեղտաջրերին:

Ոռոգման և ջրցանման կարիքների համար ծախսվող ջուրն օգտագործվում է անվերադարձ:

Օգտագործվող թարմ ջրի միջին կորուստը կազմում է 10%:

Տարեկան առաջացող կեղտաջրերը՝ $(4805 + 45 + 2) \times 0.9 = 4367 \text{ մ}^3/\text{տարի}$

Կեղտաջրերի օրական և ժամային քանակը՝ $14.56 \text{ մ}^3/\text{օր}$, $0.6 \text{ մ}^3/\text{ժ}$

Մաքրման կայան տեղափոխվող աղտոտող նյութերի քանակը տարեկան կկազմի 4.19 տ:

Զրային ռեսուրսների վրա ազդեցություն տեղի չի ունենա:

10. ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՎՐԱ

Գործարանը նախատեսվում է կառուցել նախկին աղբավայրի խախտված տեղամասում, որտեղ վաղուց բացակայում է հողի բերրի շերտը: Գործարանի տարածքը ըստ նախագծի բարեկարգվելու է և կանաչապատվելու: Հողային ռեսուրսների վրա ազդեցությունը բացակայում է:

11. ԱՌԱՋԱՑՈՂ ԹԱՓՈՆՆԵՐ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Առաջացող թափոնների անվանումները բերվել են ըստ ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի N 342-Ն հրամանով հաստատված «ՀՀ տարածքում գոյացող արտադրության և սպառման թափոնների ցանկ»-ի,

Կենցաղային աղբ

Պինդ կենցաղային թափոններին պատկանում են՝ թուղթը, սովարաթուղթը, տեքստիլը, պլաստմասսան և այլն: Թափոնների առաջացման նորման՝ $0,3 \text{ մ}^3/\text{տարի}$ 1 մարդու համար: Տեսակարար կշիռը՝ $0,25 \text{ տ}/\text{մ}^3$: Գործարանում աշխատելու է 250 մարդ, առաջացող կենցաղային աղբի քանակը կկազմի $18.75 \text{ տ}/\text{տարի}$:

Կազմակերպությունների գործունեությունից կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբը (բացառությամբ խոշոր եզրաչափերի) պատկանում է վտանգավորության 4-րդ դասին, ծածկագիր՝ 91200400 01 00 4 :

Պինդ կենցաղային թափոնները կուտակվում են տարածքում առկա աղբամանների մեջ, որտեղից էլ պարբերաբար տեղափոխվում են աղբավայր, որի տեղանքը համաձայնեցված է տեղական կառավարման մարմինների հետ:

Հեղեղաջրերի մաքրման կայանի նստվածք

Հանքայնացված նստվածքի վտանգավորության դասը՝ 94800600 01 00 4:

Կոշտ դիսպերսային նյութերի նստվածքը, որն առաջանում է հեղեղային ջրերի մաքրումից, պարբերաբար հանվում է, չորացվում և տեղափոխվում աղբավայր:

Չոր նստվածքի քանակը՝ 3.96 տ, մնացորդային խոնավությունը՝ 8%, ծավալը՝ 1.96 մ³/տարի:

Յուղոտված լաթեր

Վտանգավորության դասը՝ 58200600 01 01 4:

Թափոնի կազմը՝ գործվածք՝ 81-84%, յուղ՝ 10-14%, ջուր՝ 3-6%:

Առաջանում է յուղոտված մակերեսների, ձեռքերի, սարքավորումների մաքրումից:

Յուղոտված լաթերը ժամանակավորապես կուտակում են կափարիչով մետաղական արկղներում: Ժամանակ առ ժամանակ տեղափոխվում են աղբավայր, կամ հանձնվում լիցենզավորված կազմակերպությանը: Տարեկան առաջացող քանակը՝ 0,25տ/տարի:

12. ԱՂՄՈՒԿ

Աղմուկի հիմնական աղբյուր է հանդիսասանում կոմպրեսորների աշխատանքը: Տեղադրվելու է 44 մ³/րոպե արտադրողականությամբ 3 կոմպրեսոր: Մեկ կոմպրեսորի աշխատանքից աղմուկը՝ $LA_{էկվ} = 50$ դԲԱ: Կոմպրեսորների աղմուկի մակարդակի ցուցանիշները նույնատիպ են, տվյալ դեպքում աղմուկի գումարային մակարդակը կգերազանցի յուրաքանչյուր կոմպրեսորի աղմուկի մակարդակը 3 դԲ-ով: 3 աշխատող կոմպրեսորների աղմուկի մակարդակը՝ $50+3+3= 56$ դԲԱ: Աղմուկի մակարդակն աղմուկից պաշտպանող տարածքի հաշվարկային կետում որոշվում է ըստ ՀՀՇՆ 22-04-2014՝

$$LA_{տար} = LA_{էկվ} - \Delta LA_{հեռ} - \Delta LA_{էկր} - \Delta LA_{կանաչ}, \text{ որտեղ }`$$

$LA_{էկվ}$ - աղմուկի աղբյուրի ձայնային բնութագիրը, $LA_{էկվ} = 56$ դԲԱ;

$\Delta LA_{հեռ}$ - աղմուկի մակարդակի նվազումը հաշվարկային կետի և աղմուկի աղբյուրի միջև հեռավորությունից կախված; 100 մ-ի վրա $\Delta LA_{հեռ} = 21$ դԲԱ;

$\Delta LA_{էկր}$ - աղմուկի մակարդակի նվազումը էկրանով; գործարանիցանկապատը ծառայում է որպես էկրան՝ $\Delta LA_{էկր} = 12$ դԲԱ:

$\Delta LA_{կանաչ}$ -աղմուկի մակարդակի նվազումը կանաչ գոտիով, $\Delta LA_{կանաչ} = 10$ դԲԱ

Աղմուկի մակարդակը ամենամոտիկ բնակելի տարածքում կկազմի՝

$$LA_{տար} = LA_{էկվ} - \Delta LA_{հեռ} - \Delta LA_{էկր} - \Delta LA_{կանաչ} = 56 - 21 - 12 - 10 = 13 \text{ դԲԱ}$$

Բ և Գ կարգի շենքերի համար աղմուկի մակարդակի նորման կազմում է. $7^{00} - 23^{00}$ ժամերին՝ 55 դԲ, $23^{00} - 7^{00}$ գիշերվա ժամերին՝ 45 դԲ:

Աղմուկի ազդեցության գնահատականը՝ թույլատրելի նորմայից ցածր է:

13. ԶՐՈՅԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԵՎ ՆԱԽԱԳԾԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԵՄԱՏՈՒՄԸ

Համեմատման ցուցանիշ	Զրոյական տարբերակ	Նախագծի իրականացում
Մակերևութային ջրային ռեսուրսներից ջրի օգտագործումը, հազ.մ ³ /տարի	0	0
Քաղաքային ցանցից ջրի օգտագործումը, հազ.մ ³ /տարի	0	4.8
Կեղտաջրերի արատահոսք դեպի բաց ջրային ռեսուրսներ	չկա	չկա
Աերացիայի կայան տեղափոխվող կենցաղային կեղտաջրեր		
կեղտաջրերի ծախսը, հազ.մ ³ /տարի	0	4.37
աղտոտող նյութերի քանակը, տ/տարի	0	4.19
Արտհրապարակից հեղեղաջրերի արտահոսք	0	0
Գրունտային, ստորգետնյա ջրերի աղտոտումը	չկա	չկա
Ազդեցությունը ջրային ռեսուրսների վրա	չկա	չկա
Արտանետումները մթնոլորտ, տ/տարի.	չկա	7.047
այդ թվում՝ ածխածնի օքսիդ		5.373
ազոտի օքսիդներ		0.89
ծծմբային անհիդրիդ		0.78
Վնասակար գազերի պարունակության աճը մոտակա բնակելի գոտում, ՍԹԿ մաս.		
ածխածնի օքսիդ	-	0.19 ՍԹԿ
ազոտի օքսիդներ	-	0.05 ՍԹԿ
ծծմբային անհիդրիդ	-	0.12 ՍԹԿ
Ազդեցությունը մթնոլորտի վրա	չկա	աննշան
Ազդեցությունը հողային ռեսուրսների վրա	չկա	չկա
Ազդեցությունը կենսաբազմազանության վրա	չկա	չկա
Աղմուկի ազդեցությունը	չկա	չկա
Աղմուկի թույլատրելի նորմայի գերազանցում	չկա	չկա

Համեմատման ցուցանիշ	Զրոյական տարբերակ	Նախագծի իրականացում
Ազդեցությունը պատմամշակութային հուշարձանների վրա	չկա	չկա
Աշխատատեղերի քանակը	0	250
Ազդեցությունը առկա սոցիալ-տնտեսական վիճակի վրա	չկա	Նոր 250 աշխատատեղերի բացում Բյուջեի հատկացումներ Հայաստանի և համայնքի տնտեսական զարգացում Բարձրակարգ քայուղերի և բիտումի ՀՀ-ում շուկայական պահանջարկի հագեցում

14. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՍԸ

Նախագծի իրականացման դեպքում գործարանի գործունեությունը որոշակի ազդեցություն կունենա մթնոլորտային օդի վրա:

Տնտեսական վնասը դա շրջակա միջավայրին հասցված վնասի վերացման համար անհրաժեշտ միջոցառումների արժեքն է՝ արտահայտված դրամական համարժեքով:

Բիտումի արտադրամասից տնտեսական վնասը հաշվարկվում է ըստ ՀՀ կառավարության N91-Ն որոշմանը.

$$U_i = \tau_q \cdot \Phi_g \cdot \varphi_i \cdot P_i,$$

որտեղ՝ U - ազդեցությունն է՝ արտահայտված Հայաստանի Հանրապետության դրամներով,

τ_q - աղտոտող աղբյուրի շրջապատի (ակտիվ աղտոտման գոտու) բնութագիրն արտահայտող գործակիցն է, որը վերցվում է համաձայն նշված կարգի 9 աղյուսակի,

Φ_g - փոխադրման ցուցանիշն է, հաստատուն է և ընտրվում է՝ ելնելով բնապահպանության գործընթացը խթանելու սկզբունքից: Մեթոդակարգի համաձայն՝ $\Phi_g = 1000$ դրամ,

φ_i - i -րդ նյութի (փոշու տեսակի) համեմատական վնասակարությունն արտահայտող մեծությունն է, որի արժեքը հաշվարկվում է համաձայն մեթոդակարգի 10 և 11-րդ կետերի,

Φ_i - տվյալ (i -րդ) նյութի արտանետումների քանակի հետ կապված գործակիցն է, որը հաշվում են հետևյալ բանաձևով՝

$$\Phi_i = q \cdot S_{U_i},$$

որտեղ՝ S_{U_i} - i -րդ նյութի տարեկան փաստացի արտանետման քանակն է, տոննա

q - գործակից է,

$q = 1$ ՝ անշարժ աղբյուրների համար,

$q = 3$ ՝ շարժական աղբյուրների (ավտոտրանսպորտի) համար:

Գործարանի շահագործման ժամանակ արտանետումներից տնտեսությանը հասցված տնտեսական վնասի հաշվարկը բերված է աղյուսակ 14.1-ում: Ինչպես երևում է 14.1 աղյուսակից, գործարանի շահագործման հետևանքով աղտոտող նյութերի արտանետումներից տնտեսությանը հասցված տնտեսական վնասը գնահատվում է տարեկան ≈ 117.6 հազ. դրամ:

Ներկայացված գումարը չի առաջացնում որևէ ֆինանսական պարտավորություն:

Տնտեսական վնասի հաշվարկը

Աղյուսակ 14.1

Վնասակար արտանետումների անվանումը	Մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակը, տ/տարի			Φ_i	σ_q	Տնտեսական վնասը, ՀՀ դրամ
	S_i	q	$\Phi_i = S_i \cdot q$			$U = 1000 \cdot \sigma_q \cdot \Phi_i$
1	2	3	4	5	6	7
1. Ազոտի օքսիդներ	0,894	1	0,894	12.5	4	44700
2. Ածխածնի օքսիդ	5.373	1	5.373	1	4	21492
3. Ծծմբային անհիդրիդ	0.78	1	0.78	16.5	4	51480
ԸՆԴԱՄԵՆԸ						117672

15. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

Մթնոլորտային օդի որակի կանոնավոր մոնիթորինգը թույլ կտա արագ արձանագրել և համապատասխան միջոցառումներ ձեռնարկել շրջակա միջավայրի աղտոտումը կանխելու համար:

Մոնիթորինգի անցկացման նախնական ծրագիրը բերված է աղյուսակ 15.1-ում:

Մշտադիտարկումների պլանի կառուցվածքն ու բովանդակությունը՝

Աղյուսակ 15.1

Մշտադիտարկումների օբյեկտը	Մշտադիտարկումների վայրը	Ցուցանիշը	Մշտադիտարկումների տեսակը	Նվազագույն հաճախականությունը
Մթնոլորտային օդ	1. Գործարանի արտհրապարակ 2. Մոտակա բնակելի գոտի	- փոշի, - ածխածնի օքսիդ, - ազոտի օքսիդներ, - ծծմբային անհիդրիդ	նմուշառում, չափումներ՝ ավտոմատ չափման սարքերով. փոշու կոնցենտրացիա – Aerocet 831, կլիմայական տվյալներ – Kestrel 5500 №009088, աշխարհագրական տվյալներ – Garmin Legend Etrex GPS:	10 օրը մեկ անգամ
Մոտակա բնակավայր	Աղմուկ	Աղմուկի մակարդակը, դԲ	աղմուկի չափման սարք	30 օրը մեկ անգամ

*Մոնիթորինգի քարտեզը, նմուշառման կետերի կոորդինատներով բերված է հավելվածում:

15.1. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԺԵՔԻ ՀԱՇՎԱՐԿ

Մեկ նմուշառման արժեքը կազմում է 10 000 դրամ:

- ամսական իրականացվելու է՝ $2 \times 10000 \times 3 = 60\ 000$ դրամ
- տարեկան՝ $60\ 000 \times 12 = 720\ 000$ դրամ՝ ներառյալ ԱԱՀ:

Մոնիթորինգը և բնապահպանական կառավարման պլանը շահագործման ժամանակահատվածում

Աղյուսակ 15.2

Վայրը/գործողությունը/փուլը	Մոնիթորինգի ենթակա պարամետրերը	Մոնիթորինգի փուլը	Գործիքները և մեթոդները	Բնապահպանական միջոցառումների իրականացման ինդիկատորները	Պատասխանատու մարմինները	Հաճախականությունը և ժամանակը
Արտհրապարակ հրապարակ Մոտակա բնակելի վայր	Փոշու, գազի արտանետումներ	Շահագործման ամբողջ ընթացքում	փոշի, ածխածնի օքսիդ, ազոտի օքսիդներ, ծծմբային անհիդրիդ	Ասպիրացիոն սարք	Շահագործող	10 օրը մեկ
Թափոնների կառավարում և հեռացում	Կոշտ թափոններ, կենցաղային աղբ և այլն	Կուտակման համար սահմանված տեղամասեր	Տեսողական զննում	Աղբարկղերի տեղադրում և տարածքներից դուրսբերում	Շահագործող	Ըստ կուտակման
Մոտակա բնակավայր	Աղմուկ	Շահագործման ամբողջ ընթացքում	Աղմուկի չափման սարք	Լրացուցիչ էկրանի տեղադրում	Մասնագիտացված կազմակերպություն	30 օրը մեկ
Հարակից տարածքներ	Շինհրապարակից դուրս տարածքներ	Տարածքների աղտոտում	Տեսողական զննում	Արգելել հարակից տարածքների խախտումը, աղտոտումը	Շահագործող	Պարբերաբար

16. ԳՈՐԾԱՐԱՆԻ ՏԱՐԱԾՔԻ ՓԱԿՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Արտադրամասի փակման ծրագիրը ներառում է՝

1. Արտադրամասի սարքավորումների ապամոնտաժում և վաճառք;
2. Տարածքից դուրս կբերվեն քսայուղերի, հավելանյութերի մնացորդները և կվաճառվեն;
3. Կդատարկվեն պատրաստի արտադրանքի պահեստները;
4. Տարածքը կմաքրվի և կազատվի թափոններից;
5. Հաշվի առնելով, որ տարածքը գտնվում է արդյունաբերական գոտում և ապահովված է բոլոր անհրաժեշտ ինֆրակառուցվածքներով՝ հոսանք, ջրագիծ, ենթակայան և այլն, կանաչապատված է, խելամիտ կլինի պահպանել շենք, շինությունները, վաճառել կամ վարձակալության տալ այն պայմանով, որ նոր գործունեությունը չհակասի ՀՀ սանիտարական և էկոլոգիական պահանջներին:
6. Որպես աշխատողների կարգավիճակի մեղմացում, նրանց որակավորում են՝ նոր ստեղծվող ձեռնարկությունում աշխատելու համար: Փակման աշխատանքների արժեքը բերված է աղ. 16.1, իսկ աշխատանքների բնութագիրը աղ. 16.2-ում:

Գործարանի փակման մոտվոր արժեքը

Աղյուսակ 16.1

№	Աշխատանքների անվանումը	Արժեքը, դրամ
1	Սարքավորումների ապամոնտաժում	5 000 000
2	Նյութերի ավելցուկների հանում, տեղափոխում	1 000 000
3	Տարածքի ազատում թափոններից	500 000
4	Ընդամենը	6 500 000

Արտադրամասի փակման աշխատանքների բնութագիրը

Աղյուսակ 16.2

Արտադրամասեր	Սկզբնական աշխատանքներ	Ընթացիկ աշխատանքներ	Վերջնական ուրվանկար	Ավարտական աշխատանքներ	Այլ միջոցառումներ
Բիտումի տեղամաս	Պատրաստի բիտումի և հումքի մնացորդների հանում և վաճառք	Սարքավորումների ապամոնտաժում	Տարածքի մաքրում	Արտադրամասի կանաչ տարածքի պահպանում	Պահպանել բոլոր ինֆրակառուցվածները
Յուղերի պատրաստման տեղամաս	Պատրաստի յուղերի, ազդանյութերի, հումքի մնացորդների դուրսբերում, վաճառում	Սարքավորումների ապամոնտաժում	Արտադրամասի վնասազերծում ու մաքրում	Արտադրամասի շինությունների պահպանում	
Պահեստներ	Վաճառել նյութերի մնացորդները	Ազատել պահեստների տարածքը	Պահեստներում կուտակված դատարկ տարաների հեռացում	Պահեստները պատրաստել նոր ապրանքատեսակների պահման համար	Անհրաժեշտության դեպքում տարածքը աղտահանել
Օժանդակ արտադրամասեր, արհեստանոցներ	Դուրս կրել և վաճառել սարքավորումները և նյութերը	Արտադրամասերի ներսում իրականացնել մաքրման աշխատանքներ	Պահպանել շինությունը		
Վարչական շենքեր՝ ճաշարան և այլ կառույցներ	Դուրս կրել և վաճառել սարքավորումները և նյութերը	Տարածքը ամբողջությամբ մաքրել	Պահպանել շենքերը, ինֆրակառուցվածքները	Գործարանը, ադմինիստրատիվ շենքը և կառույցների տարածքը ռեկուլտիվացման ենթակա չեն	

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հայաստանի ազգային ատլաս: Հատոր Ա: Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե:- «Գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն» ՊՈԱԿ, Երևան, 2007թ.
2. Հրագրանի ջրավազանային կառավարման տարածքի 2022-2027 թվականների կառավարման պլան
3. ՀՀ Շրջակա միջավայրի նախարարություն, «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ, 2021- 2022թթ., <http://armmonitoring.am>
4. ՀՀ Պետական վիճակագրության տվյալներ, armstat.am, 2022թ.
5. Կոտայքի մարզպետարան, eghvard.am, yeghvard.kotayq@mta.gov.am
6. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Л-д 1986.
7. Методический подход к снижению выбросов в атмосферу Е.И.Баранова, Н.В Солонинкова:
8. Водное хозяйство. Справочник/ ред.И.И.Бородавченко.Т.5.-М.:ВО “Агропромиздат”, 1988, 399 с.
9. СНиП 2.04.02.84. Водоснабжение. Наружные сети и сооружения. - М., 1985г.`
2020թ. ուղղումներով

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ



Երևան Զուր
Yerevan Djur

«ԱՐՄՕՅԼ» ՓԲԸ
/հասցեն՝ ք. Եղվարդ, հողամաս/

Ելից/Գ.Վ. 7915.25.08.2014

Երևան, 15 սեպտեմբերի 2014թ.

Առարկան՝ Տեխնիկական պայմանի տրամադրում

Կից ներկայացվում են «Երևան Զուր» ընկերության կողմից տրամադրված ջրամիացման տեխնիկական պայմանը, ջրագծին միանալու աշխատանքների կատարման մախահաշիվը, ջրաշափական հանգույցի տիպարային գծագիրը և շամբոյի տիպային հատակագիծը:

Տեխնիկական պայմանի համաձայն ջրագծի կառուցման աշխատանքների ավարտից հետո անհրաժեշտ է կատարել մախահաշիվում նշված գումարի վճարում ՎՏԲ-Հայաստան բանկում՝ «Երևան Զուր» ՓԲԸ-ի 16048001033108 հաշվեհամարին՝ վճարման նպատակում նշելով «միացման աշխատանքների կատարման համար՝ համաձայն թիվ ԱՍ-2555 տեխնիկական պայմանի»: Այնուհետև պետք է դիմել «Երևան Զուր» ընկերության Հաճախորդների սպասարկման ցանկացած գրասենյակ /հասցեները՝ Արուլյան 66ա, Ազատության 24, Գայի 51, Արա Մարգարյան 6, Արցախի 14/ և ներկայացնել միացման աշխատանքների կատարման դիմում՝ կցելով տեխնիկական պայմանը, մախահաշիվը, վճարման անդորրագիրը և սույն գրությունը:

Ջրագծի կառուցման աշխատանքները կարող են կատարվել միայն տեղական ինքնակառավարման մարմիններից շինարարական աշխատանքների թույլտվություն ստանալուց հետո:

Հարգանքով՝

Գոռ Գրիգորյան

Կլիսավոր տնօրեն

Պատասխանատու՝
Ա. Հովհաննիսյան
հեռ.՝ 59 03 86

«ՍԵՊՏԵՄԲԵՐ 15 2014»
7915
25.08.14

Հայաստանի Հանրապետություն
ք. Երևան 0025
Արուլյան 66ա
հեռ.՝ 1-85
Ֆաքս՝ (+374 10) 56 93 57
Էլ. փոստ՝ office@yerevandjur.am

66*, Abovyan St.
Yerevan 0025
Republic of Armenia
Tel.: 1-85
Fax: (+374 10) 56 93 57
E-mail: office@yerevandjur.am



Handwritten signature

Ջրամատակարարումն իրականացվում է «Երևան Ջուր» ՓԲԸ-ի կողմից (ջրամատակարարման և/կամ ջրահեռացման) պայմանագրի կնքելուց հետո:

Ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերին միացման կետերը համարվում են սահմանազատման կետեր և, համաձայն գործող Կանոնների, այդ կետերից մինչև սեփականատիրոջ տարածքը (չենթ, շինություն) կառուցված գծերի շահագործումն իրականացվում է սեփականատիրոջ կողմից:

Հողային աշխատանքներն իրականացվում են միայն համապատասխան շահագրգիռ կազմակերպությունների կողմից բույսաբույսի անվտանգության դեպքում:

Դիմումին համապատասխան՝

- Ջրագծից միացումն իրականացվում է միայն համապատասխան շահագործման տեղամասի կողմից՝ ըստ տեխնիկական պայմանի տեղադրված ջրաչափի անվտանգության դեպքում:

- Միացման աշխատանքներն կատարվում են հանգիստի ժամերին՝ նրա կողմից համապատասխան վճարումներն իրականացնելու դեպքում:

- Փոխանցման համար նախատեսված տրամադրվում է Հարդրայնկցության և դիմում-բողոքների տնօրինության կողմից:

Սույն տեխնիկական պայմանին համապատասխան կատարված միացումներն ընդունվում են «Արևմուտք» շահագործման տնօրինության կողմից՝ համապատասխան ակտով:

Ջրամատակարարումն իրականացվում է պայմանագրի կնքելուց և «Երևան Ջուր» ՓԲԸ-ում բաժանորդ ճեպակերպվելուց հետո:

Սույն տեխնիկական պայմանը ուժի մեջ է 3 (երեք) ամիս պահանջման օրվանից: Նշված ժամկետից հետո ենթակա է վերանայման:

Կից ներկայացվում է ջրաչափական հանգույցի և դիտահորի կառուցման տիպային սխեման:

Կ.Տ.

«Արևմուտք» ՀՏ տնօրինություն  Ա. Մանուկյան

Տեղամասի գլխ. ինժեներ  Դ. Մանուկյան

Առաջատար ծախսագետ  Ա. Բարսեղյան

«19» «09» 2014թ.

 VEOLIA
Ջուր

 CamScanner

Ն Ա Խ Ա Գ Ա Շ Ի Կ

ժ=20մմ ջրագծի միացում պողպատյա ջրատարին

Հասցե՝	Ժ Եղևոցի հողահատ
Անուն Ազգանուն	«Երևան» ՓԲԸ
Անձնագրի տվյալները	

«ՎՏԲ Հայաստան» բանկ հաշվարկային հաշիվ՝ 16048001033108

Գ/Գ	Աշխատանքների և օգտագործվող նյութերի անվանում	Միավոր քանակ	Քանակ	Ֆինանսական աշխատավարձ /դրամ/		Մեք. մեխանիզմ. շահագործ. ծախս /դրամ/		Նյութերի արժեք /դրամ/		Ընդամենը /դրամ/
				Միավոր	Ընդամենը	Միավոր	Ընդամենը	Միավոր	Ընդամենը	
	1	2	3	4	5	6	7	8	9	10
1	ժ=20մմ պողպատյա խողովակի զողման աշխատանքներ	հանգ	1	1622	1622	4402	4402	1625	1625	7649
	ԸՆԴԱՄԵՆԸ									7649
	Չնախատեսված ծախսեր 3%									229.47
	ԸՆԴԱՄԵՆԸ									7878.47
	Վերադիր ծախսեր 13.3%									1048
	ԸՆԴԱՄԵՆԸ									8926
	Շահույթ 11%									982
	ԸՆԴԱՄԵՆԸ									9908
	ԱԱԳ 20%									1982
	ԸՆԴԱՄԵՆԸ									11890

Հաշվարկեց՝  Հ. Մարտիրոսյան

Ստուգեց՝  Մ. Ասլանյան

ՆՀԲ պետ՝  Մ. Բարաքանյան


«Հաստատում են»
Տեխնիկական տնօրեն՝
[Ստորագրություն]
Վ. Ռադոյան
«24» 02. 2014թ.

Տեխնիկական պայման # ԱՍ2555
(Ջրամիացման և ջրահեռացման)

Խամայնո Կովարդ Խողամյան
Տարածքի հարցեր

«ԱՐԱՐՈՅԼ» ՓԲԸ
Կահույքի և սարքավորումների

091 98-70-82
Հեռախոսահամար



Միացման տեսակ	Ջրագիծ	Կոյուղագիծ
Նկարագիր		
Տրամագիծ, ճնշում, տեսակ	d=200մմ, P=0.3մթն. ստորաբաժան	<p>Ջրահեռացման ցանցի բացակայության պատճառով անհրաժեշտ է ժամանակակից մախատեսել ե/թ փակ հերմետիկ հոր (շամբո), հիգիենիկ-հակահամաճարակային տեսչության համապատասխան քուլտվորյունից հետո:</p>
Միացման կետ	Երևանյան խճուղու եզրով անցնող d=200մմ ջրագծից	
Միացման տրամագիծ	d=20մմ	
Ջրաչափի տրամագիծը, դասը և տիպը	ԵՋ լարորատորիայում ստուգաչափված՝ Բ կամ բարձր դասի՝ d=15/20մմ	
Ջրաչափական հանգույցի կետ	ջրամիացման կետում	
Այլ պահանջներ	ջրաչափական հանգույցի կետում կառուցել դիտահոր, անհրաժեշտության դեպքում մախատեսել «Citrudfos» մակնիշի կամ մեծանախա պոմպ	